

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2011 թվականի

թիվ 880

«ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Փոփոխող փաստաթղթերի ցանկ

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի

2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման (2013 թվականի հունիսի 25-ի
խմբագրություն), 2014 թվականի հունիսի 10-ի թիվ 91 որոշման խմբագրությամբ)

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ
Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական
սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի
համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության
հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց.

1. Ընդունել «Մննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային
միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 021/2011) (կցվում է):
2. Հաստատել՝
 - 2.1. Ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման

արդյունքում ապահովվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջների պահպանումը (կցվում է)։

2.2. Ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է)։

3. Սահմանել՝

3.1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ ձկանը եւ ձկնամթերքին ու դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման հետ կապված պրոցեսներին ներկայացվող պահանջների։ Մինչեւ ձկանը եւ ձկնամթերքին ու դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման հետ կապված պրոցեսներին ներկայացվող պահանջները սահմանող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը այդ արտադրանքի եւ դրա արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման պրոցեսների համար գործում են Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերի կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության դրույթները։

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման (2013 թվականի հունիսի 25-ի խմբագրություն), 2014 թվականի հունիսի 10-ի թիվ 91 որոշման խմբագրությամբ)

3.2. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված

պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ (այսուհետ՝ արտադրանք), մինչև Տեխնիկական կանոնակարգն ուժի մտնելու օրը, վավեր են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց ոչ ուշ, քան 2015 թվականի փետրվարի 15-ը: Նշված փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչև սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը, վավերական են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրումը կամ ընդունումը չի թույլատրվում:

3.3. մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում են արտադրանքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչև Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը կամ Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 386 որոշմանը համապատասխան:

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների

շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում.

3.3.1. մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը թույլատրվում է այն արտադրանքի արտադրությունը եւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը, որը մինչև Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը ենթակա չի եղել Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության պարտադիր գնահատմանը (հավաստմանը)՝ առանց համապատասխանության պարտադիր գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի եւ առանց համապատասխանության ազգային նշանով (շուկայում՝ շրջանառության նշանով) մակնշման.

(3.3.1. ենթակետն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշմամբ)

3.4. սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետի ընթացքում շրջանառության մեջ դրված արտադրանքի, ինչպես նաեւ սույն Որոշման 3.3.1 ենթակետում նշված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում.

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 11-ի թիվ 129 որոշման խմբագրությամբ)

3.5. Տեխնիկական կանոնակարգի 24-րդ հոդվածով նախատեսված կարգով մինչև 2015 թվականի փետրվարի 15-ը պետական գրանցման ենթակա է հետեւյալ արտադրանքը՝

- 1) սեղանի բնական հանքային ջուր.

2) տարաների մեջ շաղկապված խմելու ջուր.

3) տոնուսը բարձրացնող խմիչքներ.

4) սննդային հավելումներ, համալիր սննդային հավելումներ, բուրավետիչներ, բուսական լուծամզուքներ՝ որպես համահոտային նյութեր եւ հումքային բաղադրիչներ, միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաներ եւ բակտերիալ մերաններ, տեխնոլոգիական օժանդակ միջոցներ, այդ թվում՝ ֆերմենտային պատրաստուկներ.

5) գենային ինժեներիայի եղանակով ձեւափոխված (տրանսգենային) օրգանիզմների օգտագործմամբ ստացված սննդամթերք, այդ թվում՝ գենետիկորեն ձեւափոխված միկրոօրգանիզմներ.

3.6. արտադրական այն օբյեկտների մասին տեղեկությունները, որոնք նախկինում սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեություն են իրականացրել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, մուտք են արվում պետական ռեեստր առանց Տեխնիկական կանոնակարգին համապատասխան արտադրական օբյեկտների պետական գրանցման ընթացակարգերն անցկացնելու.

3.7. Տեխնիկական կանոնակարգի 29-րդ հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրացված տեղեկատվական համակարգը գործողության մեջ դնելու պահից.

3.8. «Սննդամթերքի առանձին տեսակների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրվանից, Տեխնիկական կանոնակարգում փոփոխություններ կատարելու միջոցով, սննդամթերքի տեսակների անվանումները ենթակա են ճշգրտման՝ այդ տեխնիկական կանոնակարգերով սահմանված սահմանումներին համապատասխան եւ ենթակա են բացառման այդ Տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի անվտանգությանը ներկայացվող պահանջները (բացի ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմների

եւ դրանց տոքսինների, միկոտոքսինների, տոքսիկ տարրերի, նիտրատների, համաշխարհային նշանակության թունաքիմիկատների (պեստիցիդների) քանակին, ինչպես նաեւ ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակին ներկայացվող պահանջներից) եւ անվտանգության միկրոկենսաբանական նորմատիվները (պայմանական ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմները):

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ՝

4.1. մինչեւ «Սննդամթերքի առանձին տեսակների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերն ուժի մեջ մտնելու օրը Տեխնիկական կանոնակարգում ապահովել փոփոխությունների կատարումը՝ սույն Որոշման 3.8 ենթակետին համապատասխան.

4.2. նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը, եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում ապահովել դրա՝ սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը՝ նախատեսելով՝

4.2.1. «Սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական եւ հիգիենայի միասնական պահանջներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքին ներկայացվող պահանջները դրանցից բացառելու մասով.

4.2.2. «Մաքսային միության շրջանակներում համապատասխանության պարտադիր գնահատմանը (հավաստմանը) ենթակա արտադրանքի միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով

Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը՝ միասնական փաստաթղթեր տրամադրելու հետ մեկտեղ, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 620 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով:

4.2.3. «Մաքսային միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում սանիտարահամաճարակաբանական վերահսկողությանը (հսկողությանը) ենթակա ապրանքների միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 28-ի թիվ 299 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքը դրանից բացառելու մասով:

4.2.4. Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը վերաձեւակերպելու ընթացակարգերում փոփոխությունների նախագիծը նախապատրաստելը եւ սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը՝ Տեխնիկական կանոնակարգի պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ցուցանիշները եւ (կամ) դրանց թույլատրելի մակարդակները չեն համընկնում Տեխնիկական կանոնակարգում նշված ցուցանիշներին եւ (կամ) դրանց թույլատրելի մակարդակներին:

4.2.5. միջպետական այն ստանդարտների մշակման (փոփոխությունների

կատարման, վերանայման) եւ ներդրման մասին ծրագրի նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է Տեխնիկական կանոնակարգի պահանջների, ինչպես նաեւ միջպետական այն ստանդարտների պահպանումը, որոնք պարունակում են Տեխնիկական կանոնակարգը կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ.

4.2.6. «Անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ՝ դրանից այն արտադրանքը բացառելու մասով, որը Տեխնիկական կանոնակարգի համաձայն՝ առնչվում է կենդանական ծագման վերամշակված սննդամթերքին.

4.2.7. ««Օբյեկտների համատեղ ստուգումների անցկացման եւ անասնաբուժական հսկողությանը (վերահսկողությանը) ենթակա ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» Հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը, որը հաստատվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 834 որոշմամբ՝ Տեխնիկական կանոնակարգի դրույթներին համապատասխանություն ապահովելու մասով.

4.2.8. «Կենդանական ծագման չվերամշակված պարենային հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող

արտադրական օբյեկտների գրանցման ժամանակ ստուգումներ անցկացնելու չափորոշիչները սահմանելու մասին» Հիմնադրույթի նախագիծը նախապատրաստելը եւ մինչեւ 2013 թվականի մարտի 15-ը սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը:

5. Ռուսական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ ստանդարտների կիրառման արդյունքների մոնիթորինգի հիման վրա ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի թարմացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տարին մեկ անգամից ոչ պակաս, դրանք՝ սահմանված կարգով ներկայացնել Հանձնաժողովի քարտուղարություն՝ հաստատման համար:

6. Կողմերին՝

6.1. մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն ապահովել Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի առնչությամբ իրենց պետությունների նորմատիվ իրավական ակտերը չկիրառելու մասին համապատասխան որոշման ընդունումը.

6.2. մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ն ապահովել հավաստագրման մարմինների, համապատասխանության գնահատման (հավաստման) աշխատանքներ իրականացնող փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) պատրաստվածությունը՝ Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին հայտարարագրերի գրանցման գործընթացին.

6.3. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու պետական հսկողության (վերահսկողության) մարմիններին, եւ դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

6.4. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 3.2-3.4 ենթակետերը:

7. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետության կողմից (Ստորագրություն)	Ղազախստանի Հանրապետության կողմից (Ստորագրություն)	Ռուսաստանի Դաշնության կողմից (Ստորագրություն)
Ս. Ռումաս	ՈՒ. Շուկեև	Ի. Շուվալով

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի դեկտեմբերի 9-ի

թիվ 880 որոշմամբ

**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ՄՄ ՏԿ 021/2011

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կիրառության ոլորտը

1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (այսուհետ՝ «սույն Տեխնիկական կանոնակարգ») սահմանվում են՝

1) տեխնիկական կանոնակարգման օբյեկտները,

2) տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող՝ անվտանգության (ներառյալ սանիտարահամաճարակաբանական, հիգիենիկ եւ անասնաբուժական) վերաբերյալ պահանջները,

3) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նույնականացման կանոնները,

4) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) ձեւերը եւ ընթացակարգերը:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվեն սննդամթերքին՝ դրա մակնշմանը, սննդամթերքի արտադրության համար նախատեսված՝ սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող փաթեթավորման նյութերին, արտադրատեսակներին եւ սարքավորումներին ներկայացվող պահանջները, որոնք սահմանված են Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերով:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման ժամանակ պետք է հաշվի առնվեն սննդամթերքի առանձին տեսակներին եւ դրանց ներկայացվող պահանջների հետ կապված՝ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պարտադիր պահանջներ սահմանող՝ Մաքսային

միության տեխնիկական կանոնակարգերի (այսուհետ՝ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգեր) պահանջները, որոնք լրացնում եւ (կամ) ճշգրտում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն կարող փոփոխվել սննդամթերքի առանձին տեսակներին եւ դրանց ներկայացվող պահանջների հետ կապված՝ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող այն պահանջներով, որոնք սահմանվում են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերով:

4. Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանվում են՝

- 1) տեխնիկական կանոնակարգման օբյեկտները,
- 2) տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող անվտանգության պահանջները,
- 3) տեխնիկական կանոնակարգման օբյեկտների նույնականացման կանոնները:

Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերը կարող են պարունակել մականշվածքին եւ համապատասխանության հավաստման սխեմային ներկայացվող՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհակասող պահանջներ:

Հոդված 2. Ընդունման նպատակները

Սույն Տեխնիկական կանոնակարգի ընդունման նպատակներն են՝

- 1) մարդու կյանքի եւ (կամ) առողջության պաշտպանությունը,

2) ձեռք բերողներին (սպառողներին) մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելումը,

3) շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Հոդված 3. Տեխնիկական կանոնակարգման օբյեկտները

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտներն են՝

1) սննդամթերքը,

2) սննդամթերքին ներկայացվող պահանջներին առնչվող՝ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացները:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը չի տարածվում քաղաքացիների կողմից տնային պայմաններում, անձնական օժանդակ տնտեսություններում կամ այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնաբուծությամբ զբաղվող քաղաքացիների կողմից արտադրվող սննդամթերքի վրա եւ միայն անձնական սպառման համար նախատեսված ու Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու համար չնախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացների, բնական պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման եւ մթերատու կենդանիների բուծման վրա:

Հոդված 4. Սահմանումները

Սույն Տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակների համար օգտագործվում են հետեւյալ հասկացությունները.

ադապտացված կաթնային խառնուրդներ (մայրական կաթի փոխարինիչներ)՝ հեղուկ կամ փոշենման ձևով կովի կաթի կամ այլ մթերատու կենդանիների կաթի հիմքի վրա արտադրված՝ մինչև մեկ տարեկան երեխաների՝ անհրաժեշտ նյութերի եւ էներգիայի ֆիզիոլոգիական կարիքները բավարարելու նպատակով մայրական կաթի քիմիական բաղադրությանն առավելագույնս մոտեցված՝ վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք.

սննդային համաբուրավետիչ (համաբուրավետիչ)՝ մարդու կողմից սննդի մեջ անմիջապես չօգտագործվող համաբուրավետիչ նյութ կամ համաբուրավետիչ պատրաստուկ, կամ ջերմային տեխնոլոգիական համաբուրավետիչ կամ ծխահարման համաբուրավետիչ, կամ համաբուրավետիչներին նախորդող նյութերը կամ դրանց խառնուրդը (համաբուրավետիչ մասը), որոնք նախատեսված են սննդամթերքին հոտ եւ (կամ) համ հաղորդելու համար (բացառությամբ քաղցր, թթու եւ աղի)՝ այլ բաղադրիչների ավելացմամբ կամ առանց դրանց ավելացման.

սննդամթերքի անվտանգություն՝ սննդամթերքի վիճակ, որը վկայում է մարդու եւ ապագա սերունդների վրա վնասակար ազդեցությանն առնչվող անթույլատրելի ռիսկի բացակայության մասին.

կենսաբանական ակտիվ սննդային հավելումներ (ԿԱՍՀ)՝ բնական եւ (կամ) բնականին նույնական կենսաբանական ակտիվ նյութեր, ինչպես նաեւ պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ, որոնք նախատեսված են սննդի հետ միաժամանակյա օգտագործման կամ սննդամթերքի բաղադրության մեջ ներառման համար.

մանկական սննդի համար նախատեսված խմելու ջուր՝ խմելու ջուր, որը նախատեսված է երեխաների կողմից խմելու, սննդի պատրաստման եւ տնային պայմաններում երեխաների սննդի համար չոր մթերքների վերականգնման համար.

ջրային կենսապաշարներ՝ բնական կենսամիջավայրում (բնական ազատության մեջ) գտնվող ձկներ, ջրային անողնաշարավորներ, ջրային կաթնասուններ, ջրիմուռներ, այլ ջրային կենդանիներ եւ բույսեր.

մարդու վրա սննդամթերքի վնասակար ներգործություն՝ սննդամթերքում մարդու կյանքի կամ առողջության կամ ապագա սերունդների կյանքի եւ առողջության համար սպառնալիք ստեղծող կոնտամինանտների, աղտոտիչների առկայության հետ կապված անբարենպաստ գործոնների ներգործություն.

սննդամթերքը շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության մաքսային տարածքում սննդամթերքի առքն ու վաճառքը եւ դրա փոխանցման մյուս եղանակները՝ սկսած պատրաստողից կամ ներմուծողից.

գենետիկորեն ձեւափոխված (գենետիկ ինժեներիայի եղանակով ստացված, տրանսգենային) օրգանիզմներ (այսուհետ՝ ԳՁՕ)՝ օրգանիզմ կամ մի քանի օրգանիզմներ, ցանկացած անբջիջ, միաբջիջ կամ բազմաբջիջ գոյացություն, որոնք ունակ են վերարտադրելու կամ փոխանցելու ժառանգական գենետիկ նյութը, որոնք տարբերվում են գենետիկ ինժեներիայի մեթոդների կիրառմամբ ստացված բնական օրգանիզմներից եւ (կամ) պարունակում են գենետիկ ինժեներիայի նյութ՝ ներառյալ գեները, դրանց հատվածները կամ գեների համակցությունները.

կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն իրականացնող արտադրական օբյեկտների պետական գրանցում (այսուհետ՝ արտադրական օբյեկտների պետական գրանցում)՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեությամբ զբաղվելու թույլտվությունն իրականացնելը.

մանկական ըմպելիք խոտաբույսերից (խոտաբույսերից թեյ)՝ խոտերի եւ խոտերի լուծամզվածքների հիման վրա պատրաստված՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք.

սննդամթերքի նույնականացում՝ սննդամթերքը տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների շարքին դասելու ընթացակարգը.

սննդամթերք պատրաստող կազմակերպություն՝ անկախ դրա կազմակերպարավական ձեւից, կամ անհատ ձեռնարկատեր, այդ թվում՝ օտարերկրյա, որն իր անունից իրականացնում է սննդամթերքի արտադրություն (պատրաստում) ձեռք բերողներին (սպառողներին) իրացման համար եւ պատասխանատվություն է կրում այդ արտադրանքի՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության համար.

ներմուծող՝ Մաքսային միության անդամ պետության ռեզիդենտ, որը Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ է դնում Մաքսային միության անդամ պետության ոչ ռեզիդենտի կողմից մատակարարվող սննդամթերքը, եւ որը պատասխանատվություն է կրում այդպիսի արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության համար.

սննդամթերքի բաղադրիչ (սննդի բաղադրամաս) (այսուհետ՝ բաղադրիչ)՝ մթերք կամ նյութ (ներառյալ սննդային հավելումները, համաբուրավետիչները), որոնք բաղադրատոմսի պատրաստման կանոններին համապատասխան օգտագործվում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ եւ կազմում են դրա բաղկացուցիչ մասը:

սննդամթերքի կոնտամինացիա (աղտոտում)՝ սննդամթերքի մեջ առարկաների, մասնիկների, նյութերի եւ օրգանիզմների (կոնտամինանտների, աղտոտիչների) ներթափանցումը եւ դրանց առկայությունը տվյալ սննդամթերքին ոչ հատուկ կամ սահմանված մակարդակները գերազանցող քանակությամբ, որի հետեւանքով սննդամթերքը ձեռք է բերում մարդու համար վտանգավոր հատկություններ.

Ելակետային կաթնային խառնուրդներ՝ ադապտացված (մայրական կաթի քիմիական բաղադրությանն առավելագույնս մոտեցված) կամ մասամբ ադապտացված (մայրական կաթի քիմիական բաղադրությանը մասնակիորեն մոտեցված) խառնուրդներ, որոնք արտադրվել են կովի կամ այլ մթերատու կենդանիների կաթի հիմքով եւ նախատեսվում են կյանքի առաջին օրերից մինչեւ վեց ամսական տարիքի ժամանակահատվածում երեխաների կերակրման համար.

Կենդանական ծագման չվերամշակված սննդամթերք՝ բոլոր տեսակների մթերատու կենդանիների՝ վերամշակման (մշակման) չենթարկված մսեղիքները, դրանց մասերը (ներառյալ արյունը եւ ենթամթերքը), հում կաթը, հում յուղագերծված կաթը, հում սերուցքը, մեղվաբուծական մթերքը, ձուն եւ ձվամթերքը, ջրային կենսապաշարների որսը, ակվակուլտուրայի արտադրանքը.

Էներգիայի եւ սննդանյութերի ֆիզիոլոգիական կարիքների նորմեր՝ սննդանյութերի օրական սպառման մակարդակ, որը բավարար է ոչ պակաս, քան բնակչության 97,5 տոկոսի ֆիզիոլոգիական կարիքները բավարարելու համար՝ հաշվի առնելով տարիքը, սեռը, ֆիզիոլոգիական վիճակը եւ ֆիզիկական ակտիվությունը.

սննդարար նյութեր (սննդանյութեր)՝ սննդամթերքի բաղադրիչ մաս կազմող նյութեր, որոնք մարդու օրգանիզմի կողմից օգտագործվում են որպես էներգիայի աղբյուրներ, օրգանների եւ հյուսվածքների աճի ու նորացման, կենսագործունեության գործընթացների կարգավորմանը մասնակցող եւ սննդամթերքի սննդային արժեքը որոշող՝ ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի գոյացման համար սուբստրատների աղբյուրներ կամ նախորդող սուբստրատներ.

հարստացված սննդամթերք՝ սննդամթերք, որի մեջ ավելացված են մեկ կամ մի քանի սննդային եւ (կամ) կենսաբանական ակտիվ նյութեր եւ (կամ) դրանում սկզբնապես ոչ առկա, կամ աննշան քանակությամբ առկա կամ արտադրության (պատրաստման) գործընթացում կորսված պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ. ընդ որում, հարստացման համար օգտագործված՝

պատրաստողի կողմից երաշխավորված՝ յուրաքանչյուր սննդային կամ կենսաբանական ակտիվ նյութի պարունակությունը հասցված է սննդանյութի աղբյուր հանդիսացող սննդամթերքին առնչվող չափորոշիչներին կամ սննդամթերքի մյուս տարբերակիչ հատկանիշներին համապատասխանող մակարդակի, իսկ այդպիսի արտադրանքում սննդային եւ (կամ) կենսաբանական ակտիվ նյութերի առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի այդպիսի նյութերի վերին անվտանգ մակարդակը՝ հնարավոր բոլոր աղբյուրներից ստացման ժամանակ (այդպիսի մակարդակների առկայության դեպքում)։

ակվակուլտուրայի օբյեկտներ՝ ձուկ, ջրային անողնաշարավորներ, ջրային կաթնասուններ, ջրիմուռներ, այլ ջրային կենդանիներ եւ բույսեր, որոնք պահվում, բուծվում, այդ թվում՝ աճեցվում են կիսաազատ պայմաններում կամ արհեստականորեն ստեղծված կենսամիջավայրում։

սննդամթերքի խմբաքանակ՝ մեկ անվանում ունեցող, նույն կերպ փաթեթավորված, մեկ պատրաստողի կողմից որոշակի ժամանակահատվածում՝ մեկ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտին կամ ազգային ստանդարտին եւ (կամ) կազմակերպության ստանդարտին եւ (կամ) պատրաստողի այլ փաստաթղթերին համապատասխան արտադրված (պատրաստված) սննդամթերքի որոշակի քանակ, որն ուղեկցվում է սննդամթերքի հետազօծելիությունն ապահովող՝ ապրանքաուղեկից փաստաթղթերով։

սննդային հավելում՝ ցանկացած նյութ (կամ նյութերի խառնուրդ), որն ունի կամ չունի սեփական սննդային արժեք, սովորաբար մարդու կողմից անմիջապես սննդի մեջ չի օգտագործվում, կանխամտածված կերպով սննդամթերքին է ավելացվում դրա արտադրության (պատրաստման), փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ պահպանման ժամանակ տեխնոլոգիական նպատակի (գործառույթի) համար, ինչը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել նրան, որ տվյալ նյութը կամ դրա փոխարկման արդյունքները դառնում են սննդամթերքի բաղադրիչներ. սննդային հավելումը կարող է կատարել մեկ կամ մի քանի տեխնոլոգիական գործառույթներ։

սննդամթերք՝ կենդանական, բուսական, մանրէաբանական, հանքային, արհեստական կամ կենսատեխնոլոգիական ծագման մթերքներ՝ բնական, մշակված կամ վերամշակված տեսքով, որոնք նախատեսված են մարդու կողմից սննդի մեջ օգտագործման համար՝ ներառյալ հատուկ նշանակության սննդամթերքը, խմելու ջուրը՝ լցված տարողությունների մեջ, խմելու հանքային ջուրը, ալկոհոլային արտադրանքը (ներառյալ գարեջուրը եւ գարեջրի հիմքով խմիչքները), ոչ ալկոհոլային ըմպելիքները, կենսաբանական ակտիվ սննդային հավելումները (ԿԱՍՀ), մաստակը, մերանը եւ միկրոօրգանիզմների մեկնարկային կուլտուրաները, խմորիչները, սննդային հավելումները եւ համաբուրավետիչները, ինչպես նաեւ պարենային (սննդային) հումքը.

ակվակուլտուրայի սննդամթերք՝ ակվակուլտուրայի օբյեկտներ՝ դրանց պահման, բուծման կիսաազատ պայմաններից կամ արհեստականորեն ստեղծված կենսամիջավայրից դուրս բերված (բռնված).

դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որն ունի տրված սննդային եւ էներգետիկ արժեք, ֆիզիկական եւ զգայորոշման (օրգանոլեպտիկ) հատկություններ եւ նախատեսված է բուժիչ սննդակարգի բաղադրության մեջ օգտագործելու համար.

դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որը նախատեսված է ածխաջրային, ճարպային, սպիտակուցային, վիտամինային եւ այլ տեսակի նյութափոխանակության կարգավորման համար, որը մեջ փոփոխված է առանձին նյութերի պարունակությունը եւ (կամ) դրանց հարաբերակցությունը՝ ի համեմատություն դրանց բնական պարունակությանը, եւ (կամ) որի բաղադրության մեջ ներառված են սկզբնապես ոչ առկա նյութեր կամ բաղադրիչներ, ինչպես նաեւ հիվանդությունների զարգացման ռիսկի նվազեցման համար նախատեսված սննդամթերք.

մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք՝ հատուկ նշանակության սննդամթերք, որը նախատեսված է երեխաների համար

մանկական սննդի համար (0-ից մինչև 3 տարեկան վաղ տարիքի երեխաների, 3-ից մինչև 6 տարեկան նախադպրոցական տարիքի երեխաների, 6 տարեկան եւ ավելի բարձր դպրոցական տարիքի երեխաների համար), համապատասխանում է մանկական օրգանիզմի ֆիզիոլոգիական կարիքներին եւ վնաս չի պատճառում համապատասխան տարիքի երեխայի առողջությանը.

մարզիկների սննդի համար նախատեսված սննդամթերք՝ տրված քիմիական բաղադրությամբ հատուկ նշանակության սննդամթերք, որն ունի տրված քիմիական բաղադրություն, բարձրացված սննդային արժեք եւ (կամ) ուղղորդված արդյունավետություն ունեցող, բաղկացած է մթերքների համալիրից կամ ներկայացված է դրանց առանձին տեսակներով, որը հատուկ ազդեցություն է գործում ֆիզիկական եւ նյարդահուզական ծանրաբեռնվածության նկատմամբ մարդու հարմարվողական կարողությունների ավելացման վրա.

ոչ արդյունաբերական պատրաստման սննդամթերք՝ քաղաքացիների կողմից տնային պայմաններում եւ (կամ) անձնական օժանդակ տնտեսություններում կամ այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, անասնաբուծությամբ կամ այլ տեսակի գործունեությամբ զբաղվող քաղաքացիների կողմից ստացված սննդամթերք.

նորահայտ սննդամթերք՝ սննդամթերք (ներառյալ սննդային հավելումները եւ համաբուրավետիչները), որը Մաքսային միության տարածքում մարդու կողմից նախկինում սննդի մեջ չի օգտագործվել, մասնավորապես՝ սննդամթերք, որն ունի նոր կամ կանխամտածված փոփոխության ենթարկված նախնական մոլեկուլյար կառուցվածք. միկրոօրգանիզմներից, սնկերից եւ ջրիմուռներից, բույսերից կազմված կամ անջատված սննդամթերք. կենդանիներից անջատված, ԳՁՕ-ի կամ դրանց օգտագործմամբ ստացված սննդամթերք. նանոնյութեր եւ նանոտեխնոլոգիաների միջոցով ստացված մթերքներ՝ բացառությամբ ավանդական եղանակներով ստացված՝ շրջանառության մեջ գտնվող եւ փորձի շնորհիվ անվտանգ համարվող սննդամթերքի.

ջրագրկված սննդամթերք՝ սննդամթերք, որից ամբողջությամբ կամ մասնակիորեն հեռացված է դրանում սկզբնապես առկա ջուրը.

հավելյալ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք, որն սկսում են ներառել մինչև մեկ տարեկան երեխաների սննդի օրաբաժնի մեջ՝ որպես մայրական կաթի, մայրական կաթի փոխարինիչների կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների լրացում, եւ որն արտադրված (պատրաստված) է կենդանական եւ (կամ) բուսական ծագման մթերքի հիմքի վրա.

խառը բաղադրությամբ սննդամթերք՝ երկու կամ ավելի բաղադրիչներից բաղկացած սննդամթերք՝ բացառությամբ սննդային հավելումների եւ համաբուրավետիչների.

վերամշակում (մշակում)՝ ջերմային մշակում (բացի սառեցումից եւ պաղեցումից), ապխտում, պահածոյացում, հասունացում, թթվեցում, աղադրում, չորացում, մարինացում, խտացում, լուծամզում, արտամղում (էքստրուզիա) կամ այդ գործընթացների զուգակցությունը.

հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ՝ ադապտացված (մայրական կաթի քիմիական բաղադրությանը առավելագույնս մոտեցված) կամ մասամբ ադապտացված (մայրական կաթի քիմիական բաղադրությանը մասնակիորեն մոտեցված) խառնուրդներ, որոնք արտադրվել են կովի կամ այլ մթերատու կենդանիների կաթի հիմքով եւ նախատեսված են վեց ամսականից բարձր տարիքի երեխաների սննդի համար՝ հավելյալ սննդի համար նախատեսված մթերքների հետ զուգակցությամբ.

պրեբիոտիկներ՝ սննդանյութեր, որոնք ընտրողաբար խթանում են մարդու աղիքների պաշտպանիչ միկրոֆլորայի ներկայացուցիչների աճը եւ (կամ) կենսաբանական ակտիվությունը, նպաստում են դրա նորմալ բաղադրության եւ կենսաբանական ակտիվության պահպանմանը՝ սննդամթերքի բաղադրության մեջ կանոնավոր օգտագործվելու դեպքում.

պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ՝ կենդանի ոչ ախտածին եւ ոչ թունածին միկրոօրգանիզմներ՝ առողջ մարդու նորմալ աղիքային միկրոբիոցենոզի պաշտպանիչ խմբերի եւ համակեցական բնական միությունների ներկայացուցիչներ, որոնք ավելացվում են սննդամթերքի բաղադրության մեջ՝ մարդու աղիքների պաշտպանիչ միկրոֆլորայի եւ կենսաբանական ակտիվության բարելավման (օպտիմալացման) համար.

պարենային (սննդային) հումք՝ կենդանական, բուսական, մանրէաբանական, հանքային, արհեստական կամ կենսատեխնոլոգիական ծագման հումք եւ խմելու ջուր, որոնք օգտագործվում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) համար.

մթերատու կենդանիներ՝ կենդանիներ, բացառությամբ ձկների, ջրային անողնաշարավորների, ջրային կաթնասունների եւ այլ ջրային կենդանիների, որոնք նպատակաուղղված կերպով օգտագործվում են դրանցից սննդամթերք ստանալու համար.

արտադրական օբյեկտ, որտեղ իրականացվում է կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացմանը, վերամշակմանը (մշակմանը) ուղղված գործունեություն՝ օբյեկտ (շենք, կառույց, շինություն, կառուցվածք եւ այլ օբյեկտ), որը նախատեսված է կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացմանը, վերամշակմանը (մշակմանը) ուղղված գործունեության իրականացման համար եւ օգտագործվում է նշված գործունեության իրականացման ժամանակ՝ պատկանելով իրավաբանական անձին կամ որպես անհատ ձեռնարկատեր հանդես եկող ֆիզիկական անձին, որը նշված գործունեությունն իրականացնում է սեփականության իրավունքով կամ այլ իրավական հիմքով.

սննդամթերքի հետազօծելիություն՝ շրջանառության մեջ գտնվող սննդամթերքը պատրաստողին եւ դրա հետագա սեփականատերերին՝ բացի վերջնական սպառողից, ինչպես նաեւ սննդամթերքի եւ (կամ) պարենային (սննդային) հումքի ծագման (արտադրության, պատրաստման) վայրը

փաստաթղթերի (թղթային եւ (կամ) էլեկտրոնային կրիչներով) միջոցով պարզելու հնարավորությունը.

սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթաց՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման)՝ հաջորդաբար կատարվող տարբեր տեխնոլոգիական գործառնությունների ամբողջությունը կամ զուգակցությունը.

ձկնաբուծարաններում աճեցված ձուկ՝ ձուկ, որն աճեցվել է (կամ) գերապահվել է ջրային օբյեկտում տեղակայված հարմարանքում՝ այն կենդանի տեսքով պահելու համար.

արագ փչացող սննդամթերք՝ սննդամթերք, որի պիտանիության ժամկետը չի գերազանցում 5 օրը (եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով), որի համար պահանջվում են պահպանման եւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) հատուկ ստեղծվող ջերմաստիճանային ռեժիմներ՝ անվտանգության պահպանման եւ այդ սննդամթերքում մինչեւ մարդու առողջության համար վտանգավոր մակարդակները հիվանդաձին միկրոօրգանիզմների, փչացմանը նպաստող միկրոօրգանիզմների զարգացումը եւ (կամ) տոքսինների գոյացումը կանխելու նպատակով.

հատուկ նշանակության սննդամթերք՝ սննդամթերք, որի համար սահմանվում են առանձին նյութերի կամ բոլոր նյութերի եւ բաղադրիչների պարունակությանը եւ (կամ) հարաբերակցությանը ներկայացվող պահանջներ, եւ (կամ) որի համար փոփոխված է առանձին նյութերի պարունակությունը եւ (կամ) հարաբերակցությունը՝ ի համեմատություն այդպիսի սննդամթերքում դրանց բնական պարունակությանը, եւ (կամ) որի բաղադրության մեջ ներառված են սկզբնապես ոչ առկա նյութեր կամ բաղադրիչներ, (բացի սննդային հավելումներից եւ համաբուրավետիչներից) եւ (կամ) որի համար պատրաստողը հայտարարագրում է դրանց բուժիչ եւ (կամ) կանխարգելիչ հատկությունների մասին, եւ որը նախատեսված է մարդկանց առանձին կատեգորիաների կողմից այդ սննդամթերքի օգտագործման համար.

սննդամթերքի պիտանիության ժամկետ՝ ժամանակահատված, որի ընթացքում սննդամթերքը պետք է ամբողջությամբ համապատասխանի դրան ներկայացվող՝ սննդամթերքի առանձին տեսակների համար սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ անվտանգության պահանջներին, ինչպես նաեւ պետք է պահպանի մականշվածքում ներկայացված իր սպառողական հատկությունները, եւ որը լրանալուն պես սննդամթերքը պիտանի չէ ըստ նշանակության օգտագործելու համար.

տեխնոլոգիական միջոցներ՝ նյութ կամ նյութեր կամ դրանց ածանցյալները (բացառությամբ սարքավորումների, փաթեթավորման նյութերի, արտադրատեսակների եւ սպասքի), որոնք, չլինելով սննդամթերքի բաղադրիչ, կանխամտածված կերպով օգտագործվում են պարենային (սննդային) հումքի վերամշակման եւ (կամ) որոշակի տեխնոլոգիական նպատակների իրականացման համար սննդամթերքի արտադրության ժամանակ, եւ այդ նպատակներին հասնելուց հետո հեռացվում են այդպիսի հումքից, սննդամթերքից, կամ որոնց մնացորդային քանակները պատրաստի սննդամթերքում տեխնոլոգիական ազդեցություն չեն ունենում.

տոնուսը բարձրացնող ըմպելիքներ՝ ոչ ալկոհոլային եւ թույլ ալկոհոլային ըմպելիքներ, որոնք պարունակում են տոնուսը բարձրացնող, այդ թվում՝ բուսական ծագման նյութեր (բաղադրիչներ) այն քանակությամբ, որը բավարար է մարդու օրգանիզմի վրա տոնուսը բարձրացնող ազդեցությունն ապահովելու համար՝ բացառությամբ թեյի, սուրճի եւ դրանց հիմքով պատրաստվող ըմպելիքների.

ջրային կենսապաշարների որս՝ բնական կենսամիջավայրից հանված (բռնված) ջրային կենսապաշարներ.

սննդամթերքի ուտիլիզացում՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքի

օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք տարբերվում են սննդամթերքի համար նախատեսված նպատակներից կամ այն նպատակներից, որոնցով այդ սննդամթերքը սովորաբար օգտագործվում է, կամ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքն այնպիսի վիճակի հասցնելը, որում այն պիտանի չէ՝ դրա ցանկացած օգտագործման եւ կիրառման համար, եւ որը բացառում է դրա անբարենպաստ ներգործությունը մարդու, կենդանիների եւ շրջակա միջավայրի վրա:

Հոդված 5. Շուկայում շրջանառության կանոնները

1. Սննդամթերքը շուկայում շրջանառության մեջ է դրվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ՝ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա:

2. Այն սննդամթերքը, որը համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, եւ որն անցել է համապատասխանության գնահատում (հավաստում), մակնշվում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

3. Շրջանառության մեջ գտնվող սննդամթերքը, այդ թվում՝ պարենային (սննդային) հումքը պետք է ուղեկցվեն տվյալ արտադրանքի հետագծելիությունն ապահովող՝ ապրանքաուղեկից փաստաթղթերով:

4. Այն սննդամթերքը, որը չի համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին եւ (կամ) Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, այդ թվում՝ լրացած պիտանիության

ժամկետով սննդամթերքը, ենթակա է շրջանառությունից հանելուն՝ տնտեսական գործունեության մասնակցի (սննդամթերքը տիրապետողի) կողմից ինքնուրույնաբար, կամ՝ Մաքսային միության անդամ պետության պետական հսկողության (վերահսկողության) լիազոր մարմինների կարգադրությամբ:

Հոդված 6. Սննդամթերքի (սննդամթերքին առնչվող գործընթացների) նույնականացումը դրանք տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտների շարքին դասելու նպատակով

1. Շահագրգիռ անձինք իրականացնում են սննդամթերքի նույնականացումը՝ սննդամթերքը տեխնիկական կանոնակարգման այնպիսի օբյեկտների շարքին դասելու նպատակների համար, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Տեխնիկական կանոնակարգը:

2. Սննդամթերքի նույնականացումը կատարվում է սույն Տեխնիկական կանոնակարգում կամ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում այդ արտադրանքի սահմանման մեջ ներկայացված դրա անվանմանը եւ (կամ) հատկանիշներին համապատասխան եւ (կամ) տեսողական եւ (կամ) զգայորոշման եւ (կամ) վերլուծական մեթոդներով:

3. Սննդամթերքի նույնականացումը կատարվում է հետեւյալ մեթոդներով՝

1) ըստ անվանման՝ սպառողական փաթեթվածքների մականշվածքում եւ (կամ) ապրանքաուղեկից փաստաթղթերում նշված՝ սննդամթերքի անվանումը եւ նպատակային նշանակությունը սույն Տեխնիկական կանոնակարգում եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում սննդամթերքի տեսակի սահմանման մեջ նշված անվանման հետ համեմատելու եղանակով,

2) տեսողական մեթոդով՝ սննդամթերքի արտաքին տեսքը սույն Տեխնիկական կանոնակարգում եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի

առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում այդ սննդամթերքի սահմանման մեջ ներկայացված հատկանիշների հետ համեմատելու եղանակով,

3) զգայորոշման մեթոդով՝ սննդամթերքի զգայորոշման ցուցանիշները սույն Տեխնիկական կանոնակարգում կամ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում այդ սննդամթերքի սահմանման մեջ ներկայացված հատկանիշների հետ համեմատելու եղանակով: Զգայորոշման մեթոդը կիրառվում է, եթե հնարավոր չէ սննդամթերքը նույնականացնել ըստ անվանման եւ տեսողական մեթոդով,

4) վերլուծական մեթոդով՝ սննդամթերքի ֆիզիկաքիմիական եւ (կամ) մանրէաբանական ցուցանիշների՝ սույն Տեխնիկական կանոնակարգում կամ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերում այդ սննդամթերքի սահմանման մեջ ներկայացված հատկանիշներին համապատասխանությունը ստուգելու եղանակով: Վերլուծական մեթոդը կիրառվում է, եթե հնարավոր չէ սննդամթերքը նույնականացնել ըստ անվանման, տեսողական կամ զգայորոշման մեթոդներով:

ԳԼՈՒԽ 2. ՍՆՆ ԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հոդված 7. Սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Սահմանված պիտանիության ժամկետում Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող սննդամթերքն ըստ նպատակային նշանակության օգտագործելու ժամանակ պետք է լինի անվտանգ:

2. Սննդամթերքի անվտանգության ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հավելվածներով:

3. Խառը բաղադրությամբ սննդամթերքի համար անվտանգության ցուցանիշները (բացի մանրէաբանական ցուցանիշներից) սահմանվում են ըստ առանձին բաղադրիչների պարունակության՝ հաշվի առնելով տվյալ բաղադրիչների համար սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված զանգվածային բաժիններն ու անվտանգության ցուցանիշները, եթե այլ բան սահմանված չէ սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 6-րդ հավելվածներով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով:

4. Ջրազրկված սննդամթերքի անվտանգության ցուցանիշները (բացի մանրէաբանական ցուցանիշներից) հաշվարկվում են սկզբնական պարենային (սննդային) հումքի վերահաշվարկով՝ հաշվի առնելով այդ հումքում եւ ջրազրկված սննդամթերքում չոր նյութերի պարունակությունը, եթե այլ բան սահմանված չէ սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ եւ 6-րդ հավելվածներով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով:

5. Շրջանառության մեջ գտնվող սննդամթերքում չի թույլատրվում մարդու եւ կենդանիների առողջության համար վտանգ ներկայացնող՝ վարակիչ, մակաբուծային հիվանդությունների հարուցիչների, դրանց տոքսինների առկայությունը:

6. Սննդամթերքի պիտանիության ժամկետները եւ պահպանման պայմանները սահմանվում են պատրաստողի կողմից:

7. Սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող փաթեթվածքի, արտադրատեսակների պատրաստման համար օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին:

8. Սննդամթերքի արտադրության ժամանակ օգտագործվող հավելումներին, համաբուրավետիչներին եւ տեխնոլոգիական միջոցներին ներկայացվող պահանջները սահմանվում են Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգով:

9. Բուսական, կենդանական եւ մանրէական ծագման՝ ԳՁՕ-ից ստացված պարենային (սննդային) հումքից ստացվող սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ պետք է կիրառվեն պետական գրանցում անցած ԳՁՕ-ի գծեր:

Այն դեպքում, երբ պատրաստողը սննդամթերքն արտադրելիս չի օգտագործել ԳՁՕ, սննդամթերքում 0.9 տոկոս եւ դրանից պակաս քանակությամբ ԳՁՕ-ի պարունակությունը համարվում է պատահական կամ խառնուրդ, որը տեխնիկապես հնարավոր չէ վերացնել, եւ այդպիսի սննդամթերքը չի դասվում ԳՁՕ պարունակող սննդամթերքի շարքին:

10. Մինչեւ մեկ տարեկան երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) իրականացվում է մասնագիտացված արտադրական օբյեկտներում կամ մասնագիտացված արտադրամասերում կամ մասնագիտացված տեխնոլոգիական գծերի վրա:

11. Թարմ եւ թարմ վիճակում սառեցված սեղանի կանաչեղենի, բանջարեղենի, մրգերի եւ պտուղների մեջ չի թույլատրվում հելմինտների ձվերի եւ աղիքային ախտածին պարզագույնների ցիստերի առկայությունը:

12. Հարստացված սննդամթերքում հարստացման համար օգտագործված յուրաքանչյուր սննդային կամ կենսաբանական ակտիվ նյութի պարունակությունը պետք է հասցված լինի օրական սպառման մակարդակի առնվազն 5 տոկոսի՝ 100 միլիլիտրում կամ 100 գրամում կամ այդպիսի արտադրանքի միանգամյա չափաբաժնում:

Հարստացված սննդամթերքում պրոբիոտիկ միկրոօրգանիզմների պարունակությունը պետք է թողնի առնվազն 109 գաղութ առաջացնող միավորներ (մանրէական բջիջներ) այդպիսի արտադրանքի 1 գրամում կամ 1 միլիլիտրում:

Հոդված 8. Հատուկ նշանակության սննդամթերքին ներկայացվող անվտանգության պահանջները

1. Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի, հղիների եւ կերակրող մայրերի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չի թույլատրվում օգտագործել ԳՁՕ պարունակող պարենային (սննդային) հումք:

Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության ժամանակ չի թույլատրվում օգտագործել թունաքիմիկատների (պեստիցիդների) օգտագործմամբ ստացված պարենային (սննդային) հումք՝ համաձայն 10-րդ հավելվածի:

2. Հղիների եւ կերակրող մայրերի համար նախատեսված սննդամթերքը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին, 2-րդ եւ 3-րդ հավելվածներով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին

տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

3. Մինչև մեկ տարեկան երեխաների համար նախատեսված սննդամթերքը պետք է համապատասխանի տվյալ տարիքի երեխայի մարսողական համակարգի տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկություններին:

4. Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

մանկական սննդի համար նախատեսված թխվածքաբլիթը չպետք է պարունակի 25 տոկոսից ավելի ավելացված շաքար.

մանկական սննդի համար նախատեսված հացաբուլկեղենը չպետք է պարունակի 0.5 տոկոսից ավելի աղ.

5. Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը չպետք է պարունակի.

0.2 տոկոսից ավելի էթիլային սպիրտ.

բնական սուրճ.

ծիրանի կորիզի միջուկ.

քացախ.

քաղցրացնող նյութեր՝ բացառությամբ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերքի:

6. Վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը մայրական կաթի փոխարինիչներում չպետք է պարունակի ճարպաթթուների ընդհանուր պարունակության 4 տոկոսից ավելի քանակությամբ ճարպաթթուների տրանս իզոմերներ:

7. Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ արգելվում է օգտագործել բենզոլյական, սորբինային թթուներ եւ դրանց աղերը:

8. Վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չի թույլատրվում օգտագործել պարենային (սննդային) հումքի հետեւյալ տեսակները՝

1) Թերների սանդղակի 150 աստիճանից ավելի թթվայնությամբ կաթնաշոռ,

2) սոյայի ալյուր (բացի սոյայի սպիտակուցի իզոլյատից եւ խտանյութից (կոնցենտրատից)),

3) վնասատուներով վարակված եւ կողմնակի խառնուրդներով ու վնասատուներով աղտոտված հացահատիկ եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ,

4) մթերատու կենդանիների եւ թռչնի սպանդի մթերք՝ կրկնակի սառեցման ենթարկված,

5) հումք ձկից եւ արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ կրկնակի սառեցման ենթարկված,

6) մթերատու կենդանիների միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, եւ թռչնի միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված,

7) սոսնձանյութ (կոլագեն) պարունակող հումք՝ թռչնի մսից,

8) մթերատու կենդանիների եւ թռչնի ենթամթերք՝ բացառությամբ լյարդի, լեզվի եւ արյան,

9) տավարի միս՝ ջլազերծված, շարակցական եւ ճարպային հյուսվածքի 12 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

10) խոզի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 32 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

11) ոչխարի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 9 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

12) 2-րդ կատեգորիայի ճտի եւ բրոյլեր-ճուտիկների մսեղիքներ,

13) բլրկներ, սառեցված, կենդանիների տարբեր տեսակի ջլազերծված մսից, ինչպես նաեւ ենթամթերքից (լյարդ, լեզու, սիրտ)՝ 6 ամսից ավելի պիտանիության ժամկետով,

14) ցլերի, արու խոզերի եւ հյուծված կենդանիների միս,

15) ձկնաբուծարաններում աճեցված ձկից եւ ձկների հատակամերձ ցեղատեսակներից ստացվող ձկնային հումք,

16) ջրային թռչունների ձու եւ միս,

17) սփրեղներ,

18) կարագ՝ սերուցքային, աղի,

19) բուսական յուղեր՝ բամբակի, քնջութի,

20) ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող բուսական յուղեր (բացառությամբ ձիթապտղի յուղի). ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մմոլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող ձիթապտղի յուղ,

21) խտացրած հյութեր՝ դիֆուզիոն եղանակով ստացված,

22) համեմունքներ (բացառությամբ սամիթի, մաղադանոսի, նեխուրի, չամանի, ռեհանի, քաղցր, սպիտակ եւ բուրավետ պղպեղի, սուսամբարի (օրեգանոյի), դարչնի, վանիլի, գինձի, մեխակի, դափնետերեւի, ինչպես նաեւ՝ սոխի, սխտորի, որոնց պարունակությունը սահմանվում է պատրաստողի կողմից),

23) ձվի փոշի (արագ փչացող սննդամթերքի համար),

24) ջրածնավորված (հիդրոգենացված) յուղեր եւ ճարպեր, հագեցած ճարպաթթուների բարձր պարունակությամբ ճարպեր,

25) կծու համեմանքներ (պղպեղ, ծովաբողկ, մանանեխ),

26) մայրնեզ, մայրնեզային սոուսներ, բուսական յուղերի հիմքով սոուսներ, բուսական յուղերի հիմքով կրեմներ, հատուկ նշանակության ճարպեր, տապակման համար ճարպ:

9. Նախապրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ չի թույլատրվում օգտագործել պարենային (սննդային) հումքի հետեւյալ տեսակները՝

1) մթերատու կենդանիների եւ թռչնի սպանդի մթերք՝ կրկնակի սառեցման ենթարկված,

2) հումք ձկից եւ արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ կրկնակի սառեցման ենթարկված,

3) մթերատու կենդանիների միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, եւ թռչնի միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված,

4) սոսնձանյութ (կոլագեն) պարունակող հումք՝ թռչնի մսից,

5) սառեցված բլոկներ՝ կենդանիների տարբեր տեսակի ջլազերծված մսից, ինչպես նաեւ ենթամթերքից (յարդ, լեզու, սիրտ)՝ 6 ամսից ավելի պիտանիության ժամկետով,

6) տավարի միս՝ ջլազերծված, շարակցական եւ ճարպային հյուսվածքի 20 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

7) խոզի միս՝ ջլազերծված, ճարպային հյուսվածքի 70 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

8) ոչխարի միս՝ ջլագերծված, ճարպային հյուսվածքի 9 տոկոսից ավելի զանգվածային բաժնով,

9) ցլերի, արու խոզերի եւ հյուծված կենդանիների միս,

10) մթերատու կենդանիների եւ թռչնի ենթամթերք՝ բացառությամբ լյարդի, լեզվի եւ արյան,

11) ջրային թռչունների ձու եւ միս,

12) խտացրած հյութեր՝ դիֆուզիոն եղանակով ստացված,

13) ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մնուլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող բուսական յուղեր (բացառությամբ ձիթապտղի յուղի). ակտիվ թթվածնի/կգ ճարպի 2 մնուլից ավելի գերօքսիդացման թիվ ունեցող ձիթապտղի յուղ,

14) բուսական յուղեր՝ բամբակի,

15) ջրածնավորված յուղեր եւ ճարպեր,

16) կծու համեմանքներ (պղպեղ, ծովաբողկ, մանանեխ),

10. 3-ից մինչեւ 14 տարեկան երեխաների համար կենսաբանական ակտիվ սննդային հավելումների եւ վաղ տարիքի երեխաների համար խոտաբույսերից պատրաստված մանկական ըմպելիքների (խոտաբույսերից թեյերի) արտադրության (պատրաստման) ժամանակ թույլատրվում է օգտագործել միայն սույն Տեխնիկական կանոնակարգի 8-րդ հավելվածում նշված բուսական հումքը:

11. Վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման) ժամանակ թույլատրվում է օգտագործել սույն Տեխնիկական կանոնակարգի 9-րդ հավելվածով սահմանված վիտամինները եւ հանքային աղերը:

12. Բոլոր տարիքային խմբերի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքի արտադրության (պատրաստման)

ժամանակ՝ յուրահատուկ հոտ եւ համ հաղորդելու նպատակով թույլատրվում է օգտագործել միայն բնական սննդային համաբուրավետիչներ (համաբուրավետիչ նյութեր) եւ 4 ամսականից բարձր տարիքի երեխաների համար՝ նաեւ վանիլին:

13. Կենսաբանական ակտիվ սննդային հավելումների (ԿԱՍՀ) արտադրության (պատրաստման) ժամանակ չի թույլատրվում օգտագործել մարդու կյանքի եւ առողջության համար վտանգ ներկայացնող եւ սույն Տեխնիկական կանոնակարգի 7-րդ հավելվածով սահմանված բույսերը եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքները, կենդանական ծագման օբյեկտները, միկրոօրգանիզմները, սնկերը եւ կենսաբանական ակտիվ նյութերը:

14. Կենսաբանական ակտիվ սննդային հավելումները (ԿԱՍՀ) պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ հավելվածներով սահմանված՝ սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներին: Բույսերից եւ (կամ) դրանց լուծամզվածքներից ստացված կենսաբանական ակտիվ սննդային հավելումների օրական դոզայում կենսաբանական ակտիվ նյութերի պարունակությունը պետք է լինի այդ նյութերը որպես դեղամիջոցներ օգտագործելու ժամանակ սահմանված՝ դրանց միանգամյա թերապեւտիկ դոզայի մեծության 10-ից մինչեւ 50 տոկոսի սահմաններում:

Հոդված 9. Տոնուսը բարձրացնող ըմպելիքների անվտանգությանը ներկայացվող պահանջները

Տոնուսը բարձրացնող ըմպելիքները (այդ թվում՝ էներգետիկ ըմպելիքները) արտադրվում են (պատրաստվում են) ոչ ալկոհոլային եւ թույլ ալկոհոլային ըմպելիքների տեսքով:

Որպես տոնուսը բարձրացնող նյութերի (բաղադրիչների) աղբյուր թույլատրվում է օգտագործել կոֆեին եւ կոֆեին պարունակող բույսեր (բուսական լուծամզվածքներ), թեյ, սուրճ, գուարանա, մատե, ինչպես նաեւ դեղաբույսեր եւ դրանց լուծամզվածքները, որոնք ունեն տոնուսը բարձրացնող հատկություն

(մարդարմատ, լեուզելա, ռադիոլա վարդագույն, կիտրոնաթուփ, էլեուտերոկոկ):
Տոնուսը բարձրացնող ոչ ալկոհոլային ըմպելիքների բաղադրության մեջ
թույլատրվում է օգտագործել տոնուսը բարձրացնող երկու նյութերից
(բաղադրիչներից) ոչ ավելի, տոնուսը բարձրացնող թույլ ալկոհոլային
խմիչքներում՝ մեկից ոչ ավելի:

Տոնուսը բարձրացնող ըմպելիքների արտադրության (պատրաստման)
ժամանակ թույլատրվում է օգտագործել հանքային նյութեր, դյուրամարս
ածխաջրեր, վիտամիններ եւ վիտամինանման նյութեր, էներգետիկ
նյութափոխանակության հիմնանյութեր (սուբստրատներ) եւ խթանիչներ:

Տոնուսը բարձրացնող ըմպելիքներում կոֆեինի պարունակությունը չպետք է
գերազանցի 400 մգ/դմ³-ը:

**ԳԼՈՒԽ 3. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ՊԱՏՐԱՍՏՄԱՆ),
ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ (ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ),
ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Հոդված 10. Սննդամթերքի արտադրության (պատրաստման),
պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման
գործընթացում սննդամթերքի անվտանգության ապահովումը**

1. Սննդամթերք պատրաստողները, վաճառողները եւ սննդամթերքի
օտարերկրյա պատրաստողների գործառույթներ իրականացնող անձինք
պարտավոր են իրականացնել դրա արտադրության (պատրաստման),
պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ իրացման
գործընթացներն այնպես, որ այդ սննդամթերքը համապատասխանի սույն
Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի

առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

2. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների իրականացման ժամանակ, այդ արտադրանքի անվտանգության պահանջներից ելնելով, պատրաստողը պետք է մշակի, իրականացնի եւ պահպանի սույն հոդվածի 3-րդ մասում շարադրված՝ վտանգի վերլուծության եւ հսկման կրիտիկական կետերի համակարգի (ՎՎՀԿԿ) (անգլերեն տարբերակը՝ HACCP — Hazard Analysis and Critical Control Points) սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերը:

3. Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով դրա արտադրության (պատրաստման) գործընթացում պետք է մշակվեն, իրականացվեն եւ պահպանվեն հետեւյալ ընթացակարգերը՝

1) սննդամթերքի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ սննդամթերքի արտադրության (պատրաստման) տեխնոլոգիական գործընթացների ընտրություն.

2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) տեխնոլոգիական գործառնությունների հաջորդականության եւ հոսքայնության ընտրություն՝ պարենային (սննդային) հումքի եւ սննդամթերքի աղտոտումը բացառելու նպատակով.

3) տեխնոլոգիական գործառնությունների եւ սննդամթերքի արտադրության (պատրաստման) փուլերում սննդամթերքի վերահսկելի փուլերի սահմանում արտադրական հսկողության ծրագրերում.

4) սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքի, տեխնոլոգիական միջոցների, փաթեթավորման նյութերի, արտադրատեսակի, ինչպես նաեւ սննդամթերքի նկատմամբ հսկողության իրականացում՝ անհրաժեշտ հուսալի եւ համալիր հսկողություն ապահովող միջոցներով.

5) տեխնոլոգիական սարքավորումների սարքինության նկատմամբ հսկողության իրականացում սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին համապատասխան սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացն ապահովող կարգով.

6) տեխնոլոգիական գործառնությունների վերահսկելի փուլերի եւ սննդամթերքի նկատմամբ իրականացված հսկողության արդյունքների մասին տեղեկատվության փաստաթղթավորման ապահովում.

7) սննդամթերքի պահպանման եւ փոխադրման (տրանսպորտային փոխադրման) պայմանների պահպանում.

8) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի պահպանում՝ սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում.

9) սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով աշխատողների կողմից անձնական հիգիենայի ձեւերի ընտրություն եւ դրանց կանոնների պահպանման ապահովում.

10) սննդամթերքի անվտանգության ապահովման եղանակների ընտրություն, սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող արտադրական շինությունների, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականության սահմանում եւ դրանց իրականացում.

11) սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին արտադրված սննդամթերքի

համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի վարում ու պահպանում՝ թղթային եւ (կամ) էլեկտրոնային կրիչներով.

12) սննդամթերքի հետագծելիություն:

Հոդված 11. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում դրա անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները

1. Սույն Կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին շրջանառության մեջ դրվող սննդամթերքի համապատասխանությունն ապահովելու նպատակով սննդամթերք պատրաստողը պարտավոր է այդ սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում ներդնել անվտանգության ապահովման ընթացակարգեր:

2. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովման կազմակերպումը եւ հսկողությունն իրականացվում են պատրաստողի կողմից՝ ինքնուրույն եւ (կամ) երրորդ կողմի մասնակցությամբ:

3. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովման նպատակով պատրաստողը պետք է սահմանի՝

1) այն վտանգավոր գործոնների ցանկը, որոնց հետեանքով արտադրության (պատրաստման) գործընթացում կարող են շրջանառության մեջ դրվել սույն Կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերք.

2) արտադրության (պատրաստման) գործընթացում հսկման կրիտիկական կետերի ցանկը՝ սննդամթերքի (դրա մի մասի) արտադրության գործընթացում տեխնոլոգիական գործառնությունների պարամետրերի. պարենային (սննդային) հումքի եւ փաթեթավորման նյութերի անվտանգության պարամետրերի (ցուցանիշների), որոնց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել հսկողություն՝ սույն մասի 1-ին կետում նշված վտանգավոր գործոնները կանխարգելելու կամ վերացնելու նպատակով.

3) հսկման կրիտիկական կետերում վերահսկելի պարամետրերի սահմանային արժեքները.

4) արտադրության (պատրաստման) գործընթացում հսկման կրիտիկական կետերի մոնիթորինգի կարգը.

5) գործողության կարգի սահմանում՝ սահմանված սահմանային արժեքներից սույն մասի 3-րդ կետում նշված ցուցանիշների արժեքների շեղման դեպքում.

6) սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին շրջանառության մեջ դրվող սննդամթերքի համապատասխանության ստուգում անցկացնելու պարբերականությունը.

7) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում արտադրական շինությունների մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացները, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման եւ ախտահանման գործընթացներն իրականացնելու պարբերականությունը.

8) արտադրական շինություններ կրծողների, միջատների, սինանտրոպ թռչունների եւ կենդանիների մուտքը կանխարգելող միջոցները:

4. Պատրաստողները պարտավոր են վարել եւ պահպանել սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ փաստաթղթերը՝ ներառյալ կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը՝ թղթային եւ (կամ) տեղեկատվության էլեկտրոնային կրիչներով:

Կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը ենթակա են պահպանման՝ դրանց տրման օրվանից երեք տարվա ընթացքում:

5. Արգելվում է սնունդ ընդունել անմիջապես արտադրական շինություններում:

6. Աշխատողները, որոնց աշխատանքը կապված է սննդամթերքի արտադրության (պատրաստման) հետ եւ որոնց իրականացման ժամանակ աշխատողներն անմիջապես շփվում են պարենային (սննդային) հումքի եւ (կամ) սննդամթերքի հետ, աշխատանքի ընդունման ժամանակ անցնում են պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննումներ՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

7. Վարակիչ հիվանդություններով հիվանդ անձանց, այդպիսի հիվանդություններ ունենալու մեջ կասկածվող անձանց, վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ շփվող անձանց, վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց չի թույլատրվում աշխատել սննդամթերքի արտադրության (պատրաստման) հետ կապված աշխատանքներում:

Հոդված 12. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացները ջրով ապահովելուն ներկայացվող պահանջները

1. Սառը եւ տաք ջրի, գոլորշու, սառույցի քանակը պետք է բավարար լինի՝ անվտանգ սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) ապահովելու համար:

2. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող տարբեր ագրեգատային վիճակներով ջուրը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող ջուրը, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի եւ փաթեթավորման նյութերի հետ, պետք է համապատասխանի Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին.

2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող գոլորշին, որն անմիջական շփման մեջ է գտնվում պարենային (սննդային) հումքի եւ փաթեթավորման նյութերի հետ, չպետք է լինի սննդամթերքի աղտոտման աղբյուր.

3) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող սառույցը պետք է պատրաստված լինի Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ խմելու ջրին ներկայացվող պահանջներին համապատասխանող խմելու ջրից:

3 Ջրամատակարարմանը ներկայացվող պահանջները՝

1) սննդամթերքի արտադրության (պատրաստման) հետ անմիջապես չկապված արտադրական գործընթացներում (հակահրդեհային համակարգ, սառնարանային սարքավորումների սառեցում, գոլորշու արտադրություն եւ այլն), ինչպես նաեւ տեխնիկական կարիքների համար բուսական ծագման պարենային (սննդային) հումքի վերամշակման (մշակման) ժամանակ թույլատրվում է օգտագործել խմելու ջրին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող ջուր: Այդ գործընթացների համար նախատեսված խողովակաշարերը չպետք է օգտագործվեն խմելու ջրի մատակարարման նպատակով եւ պետք է ունենան հատկանիշներ, որոնք թույլ են տալիս տարբերակել դրանք խմելու ջրի խողովակաշարերից.

2) հերմետիկ տարողություններով եւ (կամ) համապատասխան սարքավորումների օգտագործմամբ պարենային (սննդային) հումքի եւ սննդամթերքի ջերմային մշակման ժամանակ պետք է ապահովվեն նշված տարողությունների եւ սարքավորումների սառեցման համար օգտագործվող ջրով սննդամթերքի աղտոտումը կանխարգելելու պայմանները:

Հոդված 13. Սննդամթերքի արտադրության ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքին ներկայացվող անվտանգության պահանջները

1. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին եւ լինի հետազօծելի:

2. Բուսական ծագման պարենային (սննդային) հումքը սննդամթերքի արտադրության (պատրաստման) համար օգտագործվում է այն դեպքում, երբ առկա է համապատասխան բույսերի աճեցման ժամանակ թունաքիմիկատների կիրառման, այդ հումքի պահպանման համար նախատեսված արտադրական շինությունների եւ տարաների ֆունկցացիայի վերաբերյալ տեղեկատվություն՝ այն գյուղատնտեսական բույսերի վնասատուներից եւ հիվանդություններից պաշտպանելու նպատակով:

3. Կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքը պետք է ստացված լինի մթերատու կենդանիներից, որոնք չեն ենթարկվել բնական եւ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների (կենդանիների աճի խթանիչների), հակաբիոտիկների եւ անասնաբուժական օգտագործման այլ դեղամիջոցների ազդեցության, որոնք ներարկվել են սպանդից առաջ՝ մինչեւ այդ կենդանիների օրգանիզմից դրանք հանելու ժամկետը լրանալը:

4. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում օգտագործվող պարենային (սննդային) հումքի եւ բաղադրիչների պահպանումը պետք է իրականացվի այդ հումքի եւ բաղադրիչների փջանալը կանխարգելող եւ դրանց՝ աղտոտիչ նյութերից պաշտպանությունն ապահովող պայմաններում:

Հոդված 14. Այն արտադրական շինությունների կազմակերպմանը ներկայացվող պահանջները, որտեղ իրականացվում են սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացը

1. Արտադրական շինությունների նախագծումը, դրանց կառուցվածքը, դասավորվածությունը եւ չափսը պետք է ապահովեն՝

1) պարենային (սննդային) հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպական կամ խաչաձեւվող հոսքերը բացառող տեխնոլոգիական գործառնությունների հոսքայնության հնարավորությունը.

2) սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում օգտագործվող օդի աղտոտման մասին նախազգուշացումը կամ դրա նվազեցումը.

3) կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների՝ արտադրական շինություններ ներթափանցումից պաշտպանությունը.

4) տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ տեխնիկական սպասարկում եւ ընթացիկ վերանորոգում, արտադրական շինությունների մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացներ իրականացնելու հնարավորությունը.

5) տեխնոլոգիական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ տարածությունը.

6) կեղտի կուտակումներից, արտադրվող սննդամթերքում մասնիկները թափվելուց, արտադրական շինությունների մակերեսային կոնդենսատի, բորբոսի առաջացումից պաշտպանությունը.

7) պարենային (սննդային) հումքի, փաթեթավորման նյութերի եւ սննդամթերքի պահպանման պայմանները:

2. Արտադրական շինությունները, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը), պետք է սարքավորված լինեն՝

1) բնական եւ մեխանիկական օդափոխության միջոցներով, որոնց քանակը եւ (կամ) հզորությունը, կառուցվածքը եւ գործարկումը թույլ են տալիս խուսափել սննդամթերքի աղտոտումից, ինչպես նաեւ ապահովում են նշված համակարգերի ֆիլտրերի եւ մաքրման ու փոխման ենթակա այլ մասերի հասանելիությունը.

2) Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող բնական կամ արհեստական լուսավորվածությամբ.

3) սանհանգույցներով, որոնց դռները չպետք է բացվեն դեպի արտադրական շինություն եւ պետք է սարքավորված լինեն մինչեւ նախամուտք մտնելուց առաջ աշխատանքային համազգեստի համար կախիչներով, ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով.

4) ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով՝ տաք եւ սառը ջրով, ձեռքերը լվանալու միջոցներով եւ ձեռքերը սրբելու եւ (կամ) չորացնելու համար նախատեսված սարքերով:

3. Արտադրական շինություններում չի թույլատրվում պահել անձնակազմի անձնական եւ արտադրական (հատուկ) հագուստ եւ կոշիկներ:

4. Արտադրական շինություններում չի թույլատրվում պահել սննդամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում չօգտագործվող ցանկացած նյութ եւ պարագա, այդ թվում՝ լվացող եւ ախտահանող նյութեր, բացառությամբ արտադրական շինությունների եւ սարքավորումների ընթացիկ լվացման եւ ախտահանման համար անհրաժեշտ լվացող եւ ախտահանող միջոցների:

5. Արտադրական շինությունների մասերը, որտեղ իրականացվում է սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը), պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) հատակների մակերեսայինները պետք է պատրաստված լինեն անջրանցիկ, լվացվող եւ ոչ թունավոր նյութերից, պետք է հեշտորեն լվացվեն եւ, անհրաժեշտության դեպքում, ախտահանվեն, ինչպես նաեւ պատշաճ ձեւով ցամաքեցվեն.

2) պատերի մակերեսայինները պետք է պատրաստված լինեն անջրանցիկ, լվացվող եւ ոչ թունավոր նյութերից, որոնք կարելի է լվանալ եւ, անհրաժեշտության դեպքում, ախտահանել.

3) առաստաղները կամ դրանց բացակայության դեպքում տանիքների ներքին մակերեսայինները եւ արտադրական շինությունների վերելում գտնվող կառուցվածքները պետք է ապահովեն, որ կանխարգելի կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը եւ առաստաղից կամ այդպիսի մակերեսայիններից եւ կառուցվածքներից մասնիկների թափվելու հնարավորությունն ու նպաստեն խոնավության խտացման նվազեցմանը.

4) բացվող ներքին պատուհանները (վերնափեղկերը) պետք է ունենան հեշտությամբ հանվող եւ մաքրվող միջատապաշտպան ցանցեր.

5) արտադրական շինությունների դռները պետք է լինեն հարթ, պատրաստված լինեն չներծծող նյութերից:

6. Դռները պետք է բացվեն արտադրական շինությունից դեպի ներս, եթե հակահրդեհային պահանջներով այլ բան չի նախատեսվում:

7. Արտադրական շինություններում կոյուղու համակարգերը պետք է նախագծված եւ իրականացված լինեն այնպես, որպեսզի բացառեն սննդամթերքի աղտոտման ռիսկը:

8. Արգելվում է արտադրական շինություններում իրականացնել վերանորոգման աշխատանքներ այդ արտադրական շինություններում

սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացի հետ միաժամանակ:

Հոդված 15. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի օգտագործմանը ներկայացվող պահանջները

1. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում պետք է օգտագործվեն սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումներ եւ գույք, որոնք՝

1) ունեն սննդամթերքի արտադրությունն (պատրաստումն) ապահովող կառուցվածքային եւ շահագործման բնութագրեր, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգին եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերին.

2) հնարավորություն են տալիս իրականացնելու դրանց լվացման եւ (կամ) մաքրման եւ ախտահանման աշխատանքները.

3) պատրաստված են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերին ներկայացվող պահանջներին համապատասխանող նյութերից:

2. Տեխնիկական սարքավորումները, եթե անհրաժեշտ է սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի նպատակներին հասնելու համար, պետք է սարքավորված լինեն համապատասխան հսկիչ սարքերով:

3. Սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի աշխատանքային մակերեսայինները պետք է պատրաստված լինեն չներծծող նյութերից:

Հոդված 16. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) թափոնների պահպանմանը եւ հեռացման պայմաններին ներկայացվող պահանջները

1. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում գոյացող թափոնները պետք է պարբերաբար հեռացվեն արտադրական շինություններից:

2. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացում գոյացող թափոնները բաժանվում են հետեւյալ կատեգորիաների՝

ա) կենդանի հյուսվածքներից թափոններ.

բ) մթերատու կենդանիների կենսագործունեության արդյունքում գոյացած թափոններ.

գ) այլ թափոններ (կոշտ թափոններ, աղբ):

3. Թափոնները, իրենց կատեգորիաներին համապատասխան, պետք է առանձին տեղադրվեն մակնշված, սարքին վիճակում գտնվող եւ բացառապես այդ թափոնների ու աղբի հավաքման եւ պահպանման համար օգտագործվող փակվող տարողություններում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տարողությունների կառուցվածքային բնութագրերը պետք է լինեն այնպես, որ հնարավոր լինի ապահովել դրանց մաքրումը եւ (կամ) լվացումը եւ դրանք կենդանիների ներթափանցումից պաշտպանելը:

5. Արտադրական շինություններից, սննդամթերքի արտադրության (պատրաստման) արտադրական օբյեկտի տարածքից թափոնների հեռացումը եւ վերացումը չպետք է հանգեցնեն սննդամթերքի, շրջակա միջավայրի աղտոտմանը, մարդու կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգի առաջացմանը:

Հոդված 17. Սննդամթերքի պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ իրացման գործընթացների ներկայացվող պահանջները

1. Սննդամթերքի փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) իրականացվում է տրանսպորտային միջոցներով՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված փոխադրման (տրանսպորտային փոխադրման) պայմաններին համապատասխան, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդ արտադրանքը պատրաստողի կողմից սահմանված սննդամթերքի պահպանման պայմաններին համապատասխան:

2. Միաժամանակ սննդամթերքի տարբեր տեսակների կամ սննդամթերքի եւ այլ բեռների փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար տրանսպորտային միջոցների եւ (կամ) բեռնարկղերի օգտագործման դեպքում անհրաժեշտ է ապահովել սննդամթերքի հետ շփումը, աղտոտումը եւ զգայորոշման հատկությունների փոփոխումը բացառող պայմաններ:

3. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների եւ բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովի սննդամթերքի՝ աղտոտումից, կենդանիների, այդ թվում՝ կրծողների եւ միջատների ներթափանցումից պաշտպանությունը, մաքրման, լվացման եւ ախտահանման աշխատանքների իրականացումը:

4. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքները, բեռնարկղերը եւ տարողությունները, որոնք օգտագործվում են սննդամթերքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) համար, պետք է ապահովեն սննդամթերքի փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ (կամ) պահպանման պայմանները պահպանելու հնարավորությունը:

5. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների եւ բեռնարկղերի ներքին մակերեսայինը պետք է պատրաստված լինի լվացվող եւ ոչ թունավոր նյութերից:

6. Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքները եւ բեռնարկղերը պետք է պարբերաբար ենթարկվեն անհրաժեշտ մաքրման, լվացման, ախտահանման, որպեսզի տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքները եւ բեռնարկղերը չլինեն արտադրանքի աղտոտման աղբյուր: Տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների եւ բեռնարկղերի ներքին մակերեսային լվացման համար օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված խմելու ջրին ներկայացվող պահանջներին:

7. Սննդամթերքի պահպանման ժամանակ պետք է պահպանվեն պատրաստողի կողմից սահմանված պահպանման պայմանները եւ պիտանիության ժամկետը: Պատրաստողի կողմից սահմանված պահպանման պայմանները պետք է ապահովեն սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին սննդամթերքի համապատասխանությունը:

8. Չի թույլատրվում սննդամթերքը պահպանել այլ տեսակի սննդամթերքի եւ ոչ սննդային արտադրանքի հետ այն դեպքում, երբ դա կարող է հանգեցնել սննդամթերքի աղտոտմանը:

9. Պահպանվող սննդամթերքը պետք է ուղեկցվի տվյալ արտադրանքի պահպանման պայմանների, պիտանիության ժամկետի մասին տեղեկատվությամբ:

10. Այնպիսի աշխատանքներով զբաղվող աշխատողները, որոնք կապված են սննդամթերքի պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ իրացման հետ, եւ որոնց իրականացման ժամանակ աշխատողներն անմիջապես շփվում են պարենային (սննդային) հումքի եւ (կամ) սննդամթերքի հետ, աշխատանքի ընդունման ժամանակ անցնում են պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննումներ՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

11. Վարակիչ հիվանդություններով հիվանդ անձանց, անձանց, որոնք կասկածվում են այդպիսի հիվանդություն ունենալու մեջ, վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ շփվող անձանց, վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող անձանց չի թույլատրվում աշխատել սննդամթերքի պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման) եւ իրացման հետ կապված աշխատանքներում:

12. Սննդամթերքի իրացման ժամանակ պետք է պահպանվեն պատրաստողի կողմից սահմանված պահպանման պայմանները եւ պիտանիության ժամկետները:

13. Այն դեպքում, երբ սննդամթերքի իրացումն իրականացվում է սպառողական փաթեթվածքի մեջ չփաթեթավորված կամ որի մասին տեղեկատվության մի մասը զետեղված է փաթեթվածքին կցված ներդիր թերթիկների վրա, վաճառողը պարտավոր է այդ արտադրանքի մասին տեղեկատվությունը հասցնել սպառողին:

Հոդված 18. Սննդամթերքի ուտիլիզացման գործընթացին ներկայացվող պահանջները

1. Ուտիլիզացման ենթակա է սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին չհամապատասխանող սննդամթերքը:

2. Կենդանիների կերի մեջ սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին չհամապատասխանող սննդամթերք օգտագործելու հնարավորության մասին որոշումն ընդունվում է պետական անասնաբուժական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինների կամ այլ լիազոր մարմինների կողմից՝

Մաքսային միության անդամ պետության՝ անասնաբուժության ոլորտում գործող օրենսդրությանը համապատասխան:

3. 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշված սննդամթերքը մինչեւ դրա ուտիլիզացումն ուղարկվում է պահպանման, որի իրականացման պայմանները բացառում են դրա չթույլատրված հասանելիության հնարավորությունը, եւ ենթակա է հաշվառման:

4. Պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող լիազոր մարմնի հանձնարարագրով 5-րդ հոդվածի 4-րդ մասում նշված սննդամթերքի ուտիլիզացման ժամանակ սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին չհամապատասխանող սննդամթերքի տիրապետողը կատարում է դրա ուտիլիզացման եղանակների եւ պայմանների ընտրությունը:

Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքն այնպիսի վիճակի հասցնելը, որը պիտանի չէ որեւէ ձեւով օգտագործման կամ կիրառման, ինչպես նաեւ որը բացառում է մարդու, կենդանիների եւ շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունը (այսուհետ՝ ոչնչացում) իրականացվում է տեխնիկական ցանկացած մատչելի եղանակով՝ Մաքսային միության անդամ պետության՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում գործող օրենսդրության պարտադիր պահանջների պահպանմամբ:

Այն դեպքերում, երբ ոչնչացման ենթակա է ըստ նշանակության օգտագործման համար ոչ պիտանի սննդամթերք, որը ներկայացնում է մարդկանց եւ կենդանիների հիվանդությունների առաջացման եւ տարածման կամ մարդկանց եւ կենդանիների թունավորման, շրջակա միջավայրի աղտոտման վտանգ, սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝

սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքի տիրապետողը ուտիլիզացման ընտրված վայրի, ժամանակի, եղանակների եւ պայմանների մասին գրավոր ծանուցում է Մաքսային միության անդամ պետության՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքի ուտիլիզացման մասին հանձնարարագիր տված պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող լիազոր մարմին:

7. Մարդկանց եւ կենդանիների համար վտանգավոր՝ վարակված սննդամթերքը ոչնչացումից առաջ կամ ոչնչացման ժամանակ ենթարկվում է վարակազերծման:

8. Մաքսային միության անդամ պետության պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող լիազոր մարմնի հանձնարարագրով սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքի, այդ թվում՝ պիտանիության ժամկետը լրացած սննդամթերքի ուտիլիզացման ժամանակ պատրաստողը եւ (կամ) ներմուծողը եւ (կամ) վաճառողը պարտավոր են այդ սննդամթերքի ուտիլիզացման փաստը հավաստող փաստաթուղթը ներկայացնել դրանց ուտիլիզացման մասին հանձնարարագիր տված՝ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմին՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 19. Կենդանական ծագման չմշակված սննդամթերքի ստացման գործընթացին ներկայացվող պահանջները

1. Մթերատու կենդանիների սպանդն իրականացվում է այդ նպատակով հատուկ հատկացված վայրերում:

Արտադրական օբյեկտներում, որտեղ իրականացվում է սպանդը, պետք է պահպանվեն մսի եւ մսամթերքի արտադրության (պատրաստման) արտադրական օբյեկտների՝ պահպանմանը եւ շահագործմանը ներկայացվող հիգիենայի եւ անասնաբուժասանիտարական պահանջները, որոնք ուղղված են անվտանգ սննդամթերքի եւ ոչ սննդային արտադրանքի բացթողումն ապահովելուն, ինչպես նաեւ անթույլատրելի ռիսկի առաջացման մասին նախազգուշացմանը:

2. Մթերատու կենդանիների սպանդն իրականացվում է մթերատու կենդանիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունք ապահովող միջոցներով:

3. Սննդի համար օգտագործման համար սպանդի ենթակա են անասնաբուժական առումով բարենպաստ տնտեսություններից եւ (կամ) վայրից առողջ մթերատու կենդանիները:

Սննդի համար օգտագործման նպատակով չի թույլատրվում սպանդի համար ուղարկել այն մթերատու կենդանիներին, որոնք մշակվել են միջատների դեմ պատրաստուկներով եւ (կամ) որոնց նկատմամբ կիրառվել են բտման, բուժման, հիվանդությունների կանխարգելման համար նախատեսված անասնաբուժական դեղամիջոցներ՝ մինչեւ մթերատու կենդանիների օրգանիզմից դրանց դուրսբերման համար սահմանված ժամկետը լրանալը:

Սննդային նպատակներով օգտագործման համար իրականացվող սպանդից առաջ մթերատու կենդանիները ենթակա են նախասպանդային պահման:

Մթերատու կենդանիների նախասպանդային պահման բազան պարտադիր պետք է ներառի կարանտինի բաժին, մեկուսարան եւ սանիտարական սպանդանոց: Սանիտարական սպանդանոցի բացակայության դեպքում սանիտարական սպանդի ուղարկված մթերատու կենդանիների սպանդը թույլատրվում է հատուկ նշանակված օրերին կամ մթերատու կենդանիների առաջնային մշակման արտադրամասում հերթափոխի վերջում՝ արտադրամասից

հեռացնելով առողջ մթերատու կենդանիների սպանդից գոյացած բոլոր մսեղիքները եւ այլ մթերքներ:

4. Սպանդից անմիջապես առաջ մթերատու կենդանիները ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման:

5. Սպանդից հետո մթերատու կենդանիների մսեղիքները եւ դրանց սպանդից գոյացած կենդանական ծագման չմշակված պարենային (սննդային) հումքը ենթակա են հետսպանդային անասնաբուժական զննման եւ անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Մթերատու կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման չմշակված սննդամթերքում չպետք է գոյություն ունենան վարակված հիվանդ կենդանիներին բնորոշ փոփոխություններ:

6. Սննդամթերքի արտադրության (պատրաստման) համար նախատեսված կենդանական ծագման չմշակված մյուս պարենային (սննդային) հումքը, բացառությամբ ջրային կենսապաշարների որսի, պետք է ստացվի անասնահամաճարակային բարենպաստ տնտեսություններից (արտադրական օբյեկտներից) առողջ մթերատու կենդանիներից:

7. Ջրային կենսապաշարները պետք է ծագեն արդյունահանման (որսի) անվտանգ վայրերից:

8. Կենդանական ծագման չմշակված սննդամթերքի ստացման գործընթացին ներկայացվող լրացուցիչ պահանջները սահմանվում են Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով, որոնցով սահմանվում են այդ սննդամթերքին ներկայացվող պահանջները եւ որոնք վերաբերում են այդ սննդամթերքի արտադրությանը, պահպանմանը, փոխադրմանը, իրացմանը եւ ուտիլիզացմանը ներկայացվող պահանջներին:

Հոդված 20. Անվտանգության պահանջներին սննդամթերքի համապատասխանության ապահովումը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգին սննդամթերքի համապատասխանությունն ապահովվում է դրա անվտանգության պահանջների կատարմամբ եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ:

2. Սննդամթերքի հետազոտության (փորձարկման) եւ չափման մեթոդները սահմանվում են հետազոտության (փորձարկման) եւ չափման կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման եւ կատարման ու սննդամթերքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ եւ մեթոդներ պարունակող ստանդարտների ցանկում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ՀԱՎԱՍՏՈՒՄ)

Հոդված 21. Սննդամթերքի համապատասխանության գնահատման (հավաստման) եւ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացների ձեւերը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին սննդամթերքի, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված սննդամթերքի, համապատասխանության գնահատումը (հավաստումը) կատարվում է՝

1) սննդամթերքի համապատասխանության հավաստման (հայտարարագրման),

2) հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման,

3) նոր տեսակի սննդամթերքի պետական գրանցման,

4) անասնաբուժասանիտարական փորձաքննության ձեւերով:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացների համապատասխանության գնահատումը (հավաստումը) կատարվում է սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) միջոցով, բացառությամբ 32-րդ հոդվածում նշված սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների: Արտադրության (պատրաստման) այդ գործընթացների համապատասխանության գնահատումը (հավաստումը) կատարվում է արտադրական օբյեկտների պետական գրանցման եղանակով:

3. Ոչ արդյունաբերական պատրաստման սննդամթերքի եւ սննդի (հանրային սննդի) ձեռնարկությունների սննդամթերքի, որը նախատեսված է ծառայությունների մատուցման ժամանակ իրացման համար, ինչպես նաեւ նշված սննդամթերքի իրացման գործընթացների համապատասխանության գնահատումը (հավաստումը) կատարվում է սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված սննդամթերքին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) միջոցով:

Հոդված 22. Հայտատուն սննդամթերքի համապատասխանության գնահատման (հավաստման) ժամանակ

1. Սննդամթերքի համապատասխանության գնահատման (հավաստման) ժամանակ, բացառությամբ պետական հսկողության (վերահսկողության), հայտատու կարող է լինել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, դրա տարածքում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր, կամ պատրաստողը կամ վաճառողը, կամ օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության ապահովման մասով, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, եւ այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով իր հետ կնքված պայմանագրի հիման վրա:

2. Հայտատուն պարտավոր է ապահովել սննդամթերքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա:

Հոդված 23. Համապատասխանության հայտարարագրում

1. Համապատասխանության հայտարարագրման ենթակա է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող սննդամթերքը՝ բացառությամբ

- 1) կենդանական ծագման չմշակված սննդամթերքի,
- 2) հատուկ նշանակության սննդամթերքի,

3) քացախի:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին սննդամթերքի համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է հայտատուի ընտրությամբ սեփական ապացույցների եւ (կամ) երրորդ կողմի մասնակցությամբ ստացված ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրի ընդունմամբ:

3. Սննդամթերքի համապատասխանության հայտարարագրումն իրականացվում է հայտատուի ընտրությամբ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված հայտարարագրման սխեմաներից մեկով, եթե Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան սահմանված չէ:

4. Հայտարարագրման սխեմաները՝

1) 1h հայտարարագրման սխեմա

1.1) 1h հայտարարագրման սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը՝

- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն.
- արտադրական հսկողության իրականացում.
- արտադրանքի նմուշների փորձարկում.
- համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում ու գրանցում.
- Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում:

1.2) Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության (պատրաստման) գործընթացը լինի կայուն եւ ապահովի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի համապատասխանությունը, կազմում է տեխնիկական փաստաթղթերը եւ իրականացնում է դրանց վերլուծությունը:

1.3) Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը:

1.4) Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի համապատասխանության նկատմամբ հսկողության նպատակով հայտատուն անցկացնում է սննդամթերքի նմուշների փորձարկում: Սննդամթերքի նմուշների փորձարկումն անցկացվում է հայտատուի ընտրությամբ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

1.5) Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության մասին հայտարարագիրը եւ այն գրանցում է ծանուցման սկզբունքով:

1.6) Հայտատուն զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը, եթե սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան սահմանված չէ:

2) 2h հայտարարագրման սխեմա՝

2.1) 2h հայտարարագրման սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը՝

- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն.

- սննդամթերքի խմբաքանակի փորձարկում.
- համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում ու գրանցում.
- Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում:

2.2) Հայտատուն կազմում է տեխնիկական փաստաթղթերը եւ կատարում դրանց վերլուծությունը:

2.3) Հայտատուն անցկացնում է սննդամթերքի նմուշների փորձարկում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին այդ արտադրանքի հայտագրված համապատասխանության հավաստումն ապահովելու համար: Սննդամթերքի (եզակի արտադրատեսակի) նմուշների փորձարկումն իրականացվում է հայտատուի ընտրությամբ՝ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

2.4) Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության մասին հայտարարագիրը եւ այն գրանցում է ծանուցման սկզբունքով:

2.5) Հայտատուն զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը, եթե սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան սահմանված չէ:

3) 3h հայտարարագրման սխեմա՝

3.1) 3h հայտարարագրման սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը՝

- տեխնիկական փաստաթղթերի կազմում եւ վերլուծություն.

- արտադրական հսկողության իրականացում.
- սննդամթերքի նմուշների փորձարկում.
- համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում ու գրանցում.
- Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում:

3.2) Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության (պատրաստման) գործընթացը լինի կայուն եւ ապահովի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին սննդամթերքի համապատասխանությունը, կազմում է տեխնիկական փաստաթղթերն ու իրականացնում է դրանց վերլուծությունը:

3.3) Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը:

3.4) Սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին սննդամթերքի համապատասխանության նկատմամբ հսկողության նպատակով հայտատուն անցկացնում է սննդամթերքի նմուշների փորձարկում: Սննդամթերքի նմուշի փորձարկումն անցկացվում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում:

3.5) Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության մասին հայտարարագիրը եւ այն գրանցում է ծանուցման սկզբունքով:

3.6) Հայտատուն զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը, եթե սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան սահմանված չէ:

5. Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով կարող են սահմանվել համապատասխանության հայտարարագրման այլ սխեմաներ:

6. Սեփական ապացույցների հիման վրա համապատասխանության հայտարարագրման ժամանակ հայտատուն ինքնուրույն կազմում է ապացուցողական նյութերը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի համապատասխանության հավաստման նպատակով:

7. Ապացուցողական նյութերը պետք է ներառեն հետազոտության (փորձարկման) արդյունքները, որոնք հավաստում են սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը: Այդ հետազոտությունները (փորձարկումները) կարող են անցկացվել հայտատուի սեփական փորձարկման լաբորատորիայում կամ հայտատուի հետ պայմանագրի հիման վրա այլ փորձարկման լաբորատորիայում:

8. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված փաստաթղթերից բացի՝ ապացուցողական նյութերը կարող են ներառել հայտատուի ընտրությամբ այլ փաստաթղթեր, եթե Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ, որոնք հիմք են ծառայում սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին հայտարարագրվող սննդամթերքի համապատասխանության հավաստման համար:

9. Համապատասխանության մասին հայտարարագիրը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- հայտատուի անունը եւ գտնվելու վայրը.

- պատրաստողի անունը եւ գտնվելու վայրը.
- համապատասխանության հավաստման օբյեկտի մասին տեղեկություններ, որը հնարավոր է դարձնում այդ օբյեկտի նույնականացումը.
- սույն Տեխնիկական կանոնակարգի կամ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ այն տեխնիկական կանոնակարգի անվանումը, որի պահանջներին համապատասխան կատարվում է արտադրանքի հավաստումը.
- հայտատուի՝ սննդամթերքի անվտանգության մասին հայտը՝ դրանք ըստ նշանակության օգտագործելու եւ հայտատուի կողմից սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի համապատասխանությունն ապահովելու համար միջոցներ ձեռնարկելու ժամանակ.
- անցկացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների, ինչպես նաեւ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին սննդամթերքի համապատասխանության հավաստման համար հիմք ծառայած փաստաթղթերի մասին տեղեկություններ.
- համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը.
- Մաքսային միության համապատասխան տեխնիկական կանոնակարգերով նախատեսված այլ տեղեկություններ:

10. Համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է հայտատուի կողմից, եթե Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

11. Սննդամթերքին ներկայացվող պարտադիր պահանջների փոփոխման դեպքում ապացուցողական նյութերը պետք է փոփոխվեն այդ պահանջներին համապատասխանության հավաստման մասով: Ընդ որում, համապատասխանության մասին նոր հայտարարագրի ընդունում չի պահանջվում:

12. Մաքսային միության անդամ պետությունները վարում են համապատասխանության մասին ընդունված հայտարարագրերի հաշվառում:

Հոդված 24. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը

1. Հատուկ նշանակության սննդամթերքը ենթակա է պետական գրանցման:

Հատուկ նշանակության սննդամթերք է համարվում՝

1) մանկական սննդի համար նախատեսված սննդամթերքը, այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված խմելու ջուրը.

2) դիետիկ բուժիչ եւ դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքը.

3) ավելի քան 1մգ/դմ³ հանքայնացում ունեցող կամ ավելի քիչ հանքայնացման դեպքում, հանքաջրաբուժական նորմերից ոչ պակաս քանակությամբ կենսաբանական ակտիվ նյութեր պարունակող բնական հանքային, բուժիչ-սեղանի, բուժիչ հանքային ջուրը.

4) մարզիկների, հղիների ու կերակրող մայրերի սննդի համար նախատեսված սննդամթերքը.

5) սննդի մեջ օգտագործվող կենսաբանական ակտիվ հավելումները (ԿԱՀ):

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը), պահպանումը, փոխադրումը (տրանսպորտային փոխադրումը) եւ իրացումը թույլատրվում է դրա՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգով պետական գրանցումից հետո:

3. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը կատարվում է Մաքսային միության մաքսային տարածքում դրա արտադրության (պատրաստման) նախապատրաստման փուլում, իսկ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը՝ մինչեւ դրա ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք:

4. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը կատարում է Մաքսային միության անդամ պետության կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմին):

5. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը կատարվում է անժամկետ:

6. Հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմինը կարող է դադարեցնել կամ կասեցնել հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ անհամապատասխանության դեպքերում՝ հայտնաբերված պետական հսկողության (վերահսկողության) արդյունքում, եւ (կամ) Մաքսային միության անդամ պետության դատական մարմինների որոշմամբ:

7. Հայտատուն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի որոշումը:

Հոդված 25. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման կարգը

1. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը ներառում է.

1) հայտատուի կողմից ներկայացված եւ տվյալ սննդամթերքի անվտանգությունն ու սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, դրա համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրությունը,

2) հատուկ նշանակության սննդամթերքի անվանման եւ դրա հայտատուի մասին տեղեկությունների ներառումը հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում կամ պետական գրանցման մերժման մասին որոշման ուղարկումը հայտատուին:

2. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման համար հայտատուն հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման վերաբերյալ, որի մեջ նշվում է տվյալ սննդամթերքի անվանումը, հայտատուի անվանումն ու դրա գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձ հանդիսացող հայտատուի դեպքում), հայտատուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա գտնվելու վայրի հասցեն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուի դեպքում).

2) հատուկ նշանակության սննդամթերքի նմուշների՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արդյունքները, ինչպես նաեւ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են այդ սննդամթերքի համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական

կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա,

3) սննդամթերքի նշանակության մասին տեղեկությունները:

3. Հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմին ներկայացված փաստաթղթերն ընդունվում են վերգրությամբ, որի պատճենը դրանց ընդունման ամսաթվի մասին նշումով ուղարկվում է (հանձնվում է) հայտատուին:

4. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման համար դիմումը եւ դրան կցված փաստաթղթերը կարող են հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմին ուղարկվել փոստային առաքանիով՝ ներդրվածքի մասին վերգրությամբ եւ հանձնման մասին ծանուցմամբ, կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված՝ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով:

5. Գրանցման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի կողմից իրականացվում է հայտը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով ստանալու օրվանից ոչ ավելի, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման փաստ է համարվում այդպիսի սննդամթերքի մասին տեղեկությունների ներառումը հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում՝ հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունն ավարտելուց հետո 3 օրվա ընթացքում:

7. Հատուկ նշանակության սննդամթերքի գրանցումը կարող է մերժվել հետեւյալ դեպքերում՝

1) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ոչ լիարժեք կամ ոչ հավաստի լինելու դեպքում.

2) հատուկ նշանակության սննդամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության մյուս տեխնիկական կանոնակարգերի, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա, այդ թվում՝ սպառողներին մոլորության մեջ չզգեցնելու հետ կապված պահանջների հետ անհամապատասխանության դեպքում:

Մերժման մասին որոշումը, մերժման պատճառների մասին հիմնավորմամբ, գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ուղարկվում է հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Հայտատուն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի՝ հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցումը մերժելու մասին որոշումը:

Հոդված 26. Հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրը

1. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման մասին տեղեկությունները մուտքագրվում են հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստր:

Հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրը Գրանցված սննդամթերքի միասնական ռեեստրի բաղկացուցիչ մասն է, բաղկացած է հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրի ազգային մասերից, որոնց ձեւավորումն ու վարումն ապահովվում են Մաքսային միության անդամ պետության՝ հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի կողմից:

2. Հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրում ներառվում են հետեւյալ տեղեկությունները՝

1) հատուկ նշանակության սննդամթերքի արտադրությունը (պատրաստումը) իրականացնող իրավաբանական անձի անվանումը եւ գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը, անունը, հայրանունը, գրանցման հասցեն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

- 2) հատուկ նշանակության սննդամթերքի անվանումը.
- 3) սննդամթերքը հատուկ նշանակության սննդամթերքի շարքին դասելու վերաբերյալ տեղեկությունները.
- 4) պետական գրանցման մասին որոշման ամսաթիվը եւ համարը.
- 5) պետական գրանցումն իրականացրած՝ հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնի անվանումը եւ գտնվելու վայրը:

3. Հատուկ նշանակության սննդամթերքի պետական գրանցման համար ներկայացված հայտը եւ դրան կից փաստաթղթերը կազմում են հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրի տեղեկատվական ֆոնդը եւ ենթակա են մշտական պահպանման հատուկ նշանակության սննդամթերքի գրանցման մարմնում:

4. Պետական գրանցում ստացած՝ հատուկ նշանակության սննդամթերքի միասնական ռեեստրի վարումն իրականացվում է էլեկտրոնային տվյալների բազայի ձեւով՝ պաշտպանված վնասումից եւ չթույլատրված մուտքից:

Հատուկ նշանակության սննդամթերքի այդպիսի միասնական ռեեստրի տեղեկությունները հանրամատչելի են եւ տեղադրվում են օրական կտրվածքով նորացվող՝ հատուկ որոնողական սերվերի վրա՝ համացանցում:

Հոդված 27. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը

1. Նորահայտ սննդամթերքը ենթակա է պետական գրանցման:

Նորահայտ սննդամթերքի շարքին չի դասվում հայտնի եւ արդեն կիրառված տեխնոլոգիաներով արտադրված, իր բաղադրության մեջ մարդու կողմից սննդում սպառման համար արդեն օգտագործվող բաղադրիչներ, այդ թվում՝ սննդային հավելումներ, պարունակող սննդամթերքը նույնիսկ այն դեպքում, երբ այդ սննդամթերքը եւ բաղադրիչը արտադրված են նոր բաղադրատոմսով:

2. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը կատարվում է

Մաքսային միության մաքսային տարածքում առաջին անգամ դրա արտադրության (պատրաստման) նախապատրաստման փուլում, իսկ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող սննդամթերքի պետական գրանցումը՝ մինչև առաջին անգամ դրա ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք:

3. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը կատարում է Մաքսային միության անդամ պետության կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ նորահայտ սննդամթերքի գրանցման մարմին):

4. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման փաստը նշանակում է, որ հետագայում այդ սննդամթերքը չի դիտարկվում որպես նորահայտ սննդամթերք եւ ենթակա չէ պետական գրանցման այլ հայտատուի կողմից եւ այլ անվանումների տակ:

5. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը կատարվում է անժամկետ:

6. Յուրաքանչյուր անվանմամբ նորահայտ սննդամթերքը ենթակա է գնահատման (հավաստման) սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված կարգով:

7. Նորահայտ սննդամթերքի գրանցման մարմինը կարող է դադարեցնել կամ կասեցնել նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը՝ վնաս պատճառելու դեպքերում՝ հայտնաբերված պետական հսկողության (վերահսկողության) արդյունքում, Մաքսային միության անդամ պետության դատական մարմինների որոշմամբ:

Հոդված 28. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման կարգը

1. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը ներառում է.

1) հայտատուի կողմից ներկայացված ու մարդու կյանքի եւ առողջության

համար այդ արտադրանքի անվտանգությունը հավաստող փաստաթղթերի ուսումնասիրությունը,

2) նորահայտ սննդամթերքի անվանման վերաբերյալ տեղեկությունների ներառումը նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրում կամ պետական գրանցման մերժման մասին որոշման ուղարկումը հայտատուին:

2. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման համար հայտատուն նորահայտ սննդամթերքի գրանցման մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ նորահայտ սննդամթերքի պետական գրանցման վերաբերյալ, որում նշվում է տվյալ սննդամթերքի անվանումը, հայտատուի անվանումը ու դրա գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական անձ հանդիսացող հայտատուի դեպքում), հայտատուի ազգանունը, անունը, հայրանունը, նրա գտնվելու վայրի հասցեն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (անհատ ձեռնարկատեր հանդիսացող հայտատուի դեպքում).

2) փաստաթղթերը՝

2.1) նորահայտ սննդամթերքի նմուշների՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում անցկացված հետազոտությունների (փորձարկումների) արդյունքները, ինչպես նաև մարդու կյանքի եւ առողջության համար անվտանգ լինելը հավաստող այլ փաստաթղթեր,

2.2) մարդու օրգանիզմի վրա դրա ազդեցության մասին՝ ցանկացած հավաստի աղբյուրներից ստացված տեղեկություններ, որոնցով հավաստվում է այդ սննդամթերքի՝ մարդու օրգանիզմի վրա վնասակար ազդեցության բացակայությունը:

3. Նորահայտ սննդամթերքի գրանցման մարմին ներկայացված փաստաթղթերն ընդունվում են վերգրությամբ, որի պատճենը դրանց ընդունման ամսաթվի մասին նշումով ուղարկվում է (հանձնվում է) հայտատուին:

4. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման համար հայտը եւ

դրան կից փաստաթղթերը կարող են նորահայտ սննդամթերքի գրանցման մարմին ուղարկվել փոստային առաքանիով՝ ներդրվածքի մասին վերգրությամբ եւ հանձնման մասին ծանուցմամբ, կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված՝ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով:

5. Գրանցման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը նորահայտ սննդամթերքի գրանցման մարմնի կողմից իրականացվում է հայտը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով ստանալու օրվանից ոչ ավելի, քան 5 օրվա ընթացքում:

6. Նորահայտ սննդամթերքի գրանցումը կարող է մերժվել հետեւյալ դեպքերում՝

1) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի ոչ լիարժեք կամ ոչ հավաստի լինելու դեպքում.

2) սննդամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջների հետ անհամապատասխանության դեպքում, որոնց գործողությունը տարածվում է այդ սննդամթերքի վրա.

3) մարդու օրգանիզմի վրա ապացուցված անբարենպաստ ազդեցության հաստատման դեպքում:

Մերժման մասին որոշումը, մերժման պատճառների մասին հիմնավորմամբ, գրավոր կամ էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ուղարկվում է հայտատուին երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. Հայտատուն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու նորահայտ սննդամթերքի գրանցման մարմնի՝ նորահայտ սննդամթերքի պետական գրանցումը մերժելու մասին որոշումը:

Հոդված 29. Նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրը

1. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման մասին տեղեկությունները մուտքագրվում են նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստր:

Նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրը Գրանցված սննդամթերքի միասնական ռեեստրի բաղկացուցիչ մասն է եւ բաղկացած է նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրի ազգային մասերից, որոնց ձեւավորումը եւ վարումն ապահովվում են Մաքսային միության անդամ պետության՝ նորահայտ սննդամթերքի գրանցման մարմնի կողմից:

2. Նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրում ներառվում են հետեւյալ տեղեկությունները՝

- 1) նորահայտ սննդամթերքի նկարագրությունը.
- 2) պետական գրանցման մասին որոշման ամսաթիվը եւ համարը:

3. Նորահայտ սննդամթերքի պետական գրանցման համար ներկայացված հայտը եւ դրան կից փաստաթղթերը կազմում են նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրի ազգային մասերի տեղեկատվական ֆոնդը եւ ենթակա են մշտական պահպանման նորահայտ սննդամթերքի գրանցման մարմնում:

4. Պետական գրանցում ստացած՝ նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրի վարումն իրականացվում է էլեկտրոնային տվյալների բազայի ձեւով՝ պաշտպանված վնասումից եւ չթույլատրված մուտքից:

Նորահայտ սննդամթերքի միասնական ռեեստրի տեղեկությունները հանրամատչելի են եւ տեղադրվում են օրական կտրվածքով նորացվող՝ հատուկ որոնողական սերվերի վրա՝ համացանցում:

Հոդված 30. Անասնաբուժասանիտարական փորձաքննությունը

1. Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելուց առաջ կենդանական ծագման չվերամշակված սննդամթերքը ենթակա է անասնաբուժասանիտարական փորձաքննության, եթե այլ բան սահմանված չէ Մաքսային միության՝ ձկնային սննդամթերքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով, եւ ուղեկցվում է անվտանգությունը հավաստող տեղեկություններ պարունակող փաստաթղթով:

Կենդանական ծագման վերամշակված սննդամթերքը ենթակա չէ անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Անասնաբուժասանիտարական փորձաքննության ձեռով կարող է իրականացվել ոչ արդյունաբերական պատրաստման կենդանական ծագման սննդամթերքի՝ այն պահանջներին համապատասխանության գնահատումը, որոնք սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ այլ տեխնիկական կանոնակարգերով:

2. Կենդանական ծագման չվերամշակված սննդամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննությունը կատարվում է՝

1) սննդամթերքի եւ դրան ներկայացվող անվտանգության պահանջներին առնչվող՝ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացների՝ այն պահանջներին համապատասխանության հաստատման նպատակով, որոնք սահմանվում են սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ այլ տեխնիկական կանոնակարգերով.

2) կենդանիների ծագման տնտեսությունների (արտադրական օբյեկտների)՝ անասնաբուժական տեսանկյունից բարենպաստության հաստատման նպատակով:

3. Անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացումը եւ դրա արդյունքների ձեւակերպումն իրականացվում են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը, ինչպես նաեւ Մաքսային միության՝ անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ համաձայնագրին համապատասխան:

Հոդված 31. Արտադրական օբյեկտների պետական գրանցումը

1. Տնտեսական գործունեության մասնակիցն իրավունք ունի Մաքսային միության մաքսային տարածքում իրականացնելու սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացները միայն այն արտադրական օբյեկտների պետական գրանցումից հետո, որոնցում իրականացվում են արտադրության (պատրաստման) տվյալ գործընթացները:

2. Արտադրական օբյեկտների պետական գրանցումն իրականացնում է Մաքսային միության անդամ պետության կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ արտադրական օբյեկտների գրանցման մարմին)՝ առեւտրատնտեսական գործունեության մասնակցի (այսուհետ՝ հայտատու) կողմից ներկայացվող արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտի հիման վրա:

3. Հայտատուն արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտը ներկայացնում է սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների նախատեսված մեկնարկի վայրի՝ արտադրական օբյեկտների գրանցման հարցերով մարմին:

4. Թղթային կրիչով ներկայացվող հայտը պետք է ստորագրված լինի տնտեսական գործունեության մասնակցի լիազոր ներկայացուցչի կողմից, ինչպես նաեւ համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 33-րդ հոդվածի պահանջներին:

5. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտը եւ դրան կից փաստաթղթերը կարող են ուղարկվել փոստային առաքանիով՝ ներդրվածքի մասին վերգրությամբ եւ հանձնման մասին ծանուցմամբ, կամ էլեկտրոնային եղանակով:

6. Թղթային կրիչով ներկայացվող՝ դրան կից փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն հայտատուի կողմից: Կցված փաստաթղթերում ներառված տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում հայտատուն:

7. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտն ստանալու պահից ոչ ավելի, քան 30 օրվա ընթացքում արտադրական օբյեկտների գրանցման մարմինը պարտավոր է անցկացնել գրանցվող արտադրական օբյեկտների՝ արտադրության գործընթացին ներկայացվող այն պահանջների հետ համապատասխանության ստուգում, որոնք սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգով եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով: Ստուգումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

8. Գրանցվող արտադրական օբյեկտի ստուգման արդյունքների հիման վրա՝ արտադրական օբյեկտների գրանցման մարմինը որոշում է ընդունում արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին, դրան տալիս է նույնականացման (հաշվառման) համար եւ արտադրական օբյեկտը մուտքագրում է պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր կամ տալիս է հայտնաբերված խախտումները վերացնելու մասին հանձնարարագիր:

9. Հանձնարարագրում նշված խախտումները վերացնելուց հետո հայտատուն արտադրական օբյեկտների գրանցման հարցերով մարմնին գրավոր ծանուցում է հանձնարարագրի կատարման եւ հայտնաբերված խախտումները

վերացնելու մասին: Հայտնաբերված խախտումները վերացնելու մասին ծանուցման մեջ պետք է ներառվեն տեղեկություններ բացահայտված խախտումները վերացնելու փաստի եւ եղանակների, բացահայտված խախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին: Ծանուցումն ուղարկվում է սույն հոդվածի 3-րդ, 5-րդ մասերով սահմանված կարգով:

10. Արտադրական օբյեկտների գրանցման մարմինն իրավունք ունի սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով հանձնարարագրի կատարման առնչությամբ ստուգում իրականացնելու՝ հանձնարարագրի կատարման եւ հայտնաբերված բոլոր խախտումները վերացնելու մասին ծանուցումն ստանալու պահից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում եւ ընդունելու արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին որոշում կամ արտադրական օբյեկտի պետական գրանցումը մերժելու մասին որոշում:

11. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը կատարվում է անժամկետ:

12. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը մերժելու համար հիմք է համարվում հայտնաբերված խախտումները վերացնելու մասին հանձնարարագրի, սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա, պահանջները չկատարելը: Արտադրական օբյեկտի պետական գրանցման մերժումը պետք է կատարվի գրավոր եւ պարունակի նշում Տեխնիկական կանոնակարգի այն պահանջների մասին, որոնք խախտվել են: Արտադրական օբյեկտի պետական գրանցման մերժումը պետք է հանձնվի հայտատուի ներկայացուցչին անձամբ կամ ուղարկվի հայտատուին փոստային առաքանիով՝ հանձնման մասին ծանուցմամբ:

13. Արտադրական օբյեկտի պետական գրանցումը կարող է դադարեցվել արտադրական օբյեկտների գրանցման մարմնի կողմից այն դեպքում, երբ պետական հսկողություն (վերահսկողություն) անցկացնելու արդյունքում

Մաքսային միության անդամ պետության դատական մարմինների որոշմամբ հաստատվել է այն փաստը, որ արտադրության գործընթացը չի համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

14. Հայտատուն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու արտադրական օբյեկտների գրանցման մարմնի որոշումը:

Հոդված 32. Պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտները

Պետական գրանցման ենթակա են այն արտադրական օբյեկտները, որոնցում իրականացվում է կենդանական ծագման չվերամշակված պարենային (սննդային) հումքի ստացման, վերամշակման (մշակման) գործունեություն, մասնավորապես՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) հետեւյալ գործընթացները՝

ա) մթերատու կենդանիների եւ թռչունների սպանդ, մթերատու կենդանիների եւ թռչունների սպանդային մթերքի վերամշակում (մշակում) սննդամթերքի արտադրության (պատրաստման) համար.

բ) հում կաթի, հում սերուցքի եւ յուղազերծված հում կաթի ընդունում եւ (կամ) դրանց վերամշակում (մշակում) կաթնային արտադրանքի արտադրության (պատրաստման) ժամանակ.

գ) գյուղատնտեսական նշանակության թռչունների ձվերի եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքների արտադրություն (պատրաստում) եւ վերամշակում (մշակում).

դ) ակվակուլտուրայի արտադրանքի եւ ջրային կենսապաշարների որսի (արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ), բացառությամբ բուսական ծագման արտադրանքի, արտադրություն (պատրաստում) եւ վերամշակում (մշակում):

Հոդված 33. Արտադրական օբյեկտների պետական գրանցման մասին հայտը

1. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտում պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները՝

1) անվանումն ու գտնվելու վայրը (իրավաբանական անձի դեպքում), ազգանունը, անունը, հայրանունը, գրանցման հասցեն, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում).

2) արտադրական օբյեկտի փաստացի հասցեն.

3) սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) այն գործընթացների ցանկը, որոնք նախատեսվում է իրականացնել.

4) իրավաբանական անձի գրանցման վկայականի տվյալները (իրավաբանական անձի դեպքում).

5) անհատ ձեռնարկատիրոջ գրանցման վկայականի տվյալները (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում):

2. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտում նշում է կատարվում այն մասին, որ տվյալ արտադրական օբյեկտը համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակներին վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին:

3. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտում ներառված տեղեկությունների հավաստիության համար պատասխանատվություն է կրում հայտատուն:

4. Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտի ձեռք սահմանվում է արտադրական օբյեկտների գրանցման մարմնի կողմից: Արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին հայտի հաստատված ձեռք

պետք է պաշտոնապես հրապարակվի համընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային-թվային եղանակով:

Հոդված 34. Արտադրական օբյեկտների պետական գրանցումը հավաստող փաստաթղթերը

1. Արտադրական օբյեկտի պետական գրանցման փաստ է համարվում արտադրական օբյեկտին նույնականացման համար տալը եւ արտադրական օբյեկտի մասին տեղեկությունները պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում ներառելը: Հայտատուի ցանկությամբ նրան կարող է տրվել սահմանված ձեւի քաղվածք պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրից (այսուհետ՝ քաղվածք):

2. Քաղվածքը պետք է ներառի հետեւյալ տեղեկությունները՝

1) նույնականացման համարը, որը մուտքագրվում է պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր.

2) անվանումն ու գտնվելու վայրը (հրավաբանական անձի դեպքում), ազգանունը, անունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում).

3) արտադրական օբյեկտի փաստացի հասցեն.

4) սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված՝ սննդամթերքի արտադրության այն գործընթացների ցանկը, որոնք նախատեսվում է իրականացնել:

3. Քաղվածքի ձեւը սահմանվում է արտադրական օբյեկտների գրանցման մարմնի կողմից: Քաղվածքի հաստատված ձեւը պետք է պաշտոնապես հրապարակվի համընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ էլեկտրոնային-թվային եղանակով:

Հոդված 35. Հայտատուի եւ պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտի վերաբերյալ փաստացի տվյալների փոփոխության մասին տեղեկացնելու կարգը

1. Հայտատուն պարտավոր է 14 օրվա ընթացքում, 31-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով, արտադրական օբյեկտների գրանցման մարմին ներկայացնել տեղեկություններ հետևյալ փոփոխությունների մասին՝

- 1) իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխություն,
- 2) անհատ ձեռնարկատիրոջ ազգանվան, անվան, հայրանվան, գրանցման հասցեի, անձը հաստատող փաստաթղթի տվյալների փոփոխություն,
- 3) իրավաբանական անձի վերակազմակերպում:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված փաստացի տվյալների փոփոխության դեպքում՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված գործընթացների մեջ ներառված՝ իրականացվող արտադրական գործընթացների ցանկի ընդլայնման ուղղությամբ, հայտատուն պարտավոր է տվյալ փոփոխությունների մասին արտադրական օբյեկտների գրանցման մարմին հաղորդել սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածով սահմանված արտադրական գործընթացների ցանկի մաս կազմող այնպիսի նոր արտադրական գործընթացների ծրագրավորվող փաստացի մեկնարկից առնվազն 30 օր առաջ, որոնք նշված չեն պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում եւ պետական գրանցման վկայականում (դրա առկայության դեպքում): Հայտատուն պետք է այդ տվյալների փոփոխության մասին հաղորդագրությանը կից ներկայացնի փաստաթղթեր, որոնցում կատարվել են փոփոխությունները, կամ՝ սույն Տեխնիկական կանոնակարգի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերով նախատեսված նոր փաստաթղթեր:

Արտադրական օբյեկտների գրանցման մարմինն իրավունք ունի կատարելու պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական

օբյեկտների՝ սույն Տեխնիկական կանոնակարգով եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ արտադրության (պատրաստման) գործընթացին ներկայացվող պահանջներին համապատասխանության ստուգում՝ հայտատուի հաղորդագրությունն ստանալու պահից 30 օրվա ընթացքում:

3. Արտադրական օբյեկտների գրանցման մարմինը պարտավոր է, սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում նշված՝ հայտատուի հաղորդագրությունների հիման վրա, 30 օրվա ընթացքում փոփոխություններ կատարել պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում: Հայտատուն կարող է մերժում ստանալ պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրի տվյալների փոփոխության առնչությամբ այն դեպքում, երբ սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն ստուգման ժամանակ հայտնաբերվում են սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի պահանջների խախտումներ:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված փաստացի տվյալների փոփոխության կամ հայտատուի լուծարման դեպքում գրանցումը դադարեցվում է:

Հոդված 36. Պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր

1. Արտադրական օբյեկտների պետական գրանցման մասին տեղեկությունները մուտքագրվում են պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր, որը վարում է արտադրական օբյեկտների գրանցման մարմինը:

2. Պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրում ներառվում են հետեւյալ տեղեկությունները՝

1) սույն Տեխնիկական կանոնակարգի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները,

2) գրանցված արտադրական օբյեկտի նույնականացման համարը,

3) արտադրական օբյեկտի պետական գրանցման մասին որոշում ընդունած՝ արտադրական օբյեկտների գրանցման մարմնի անվանումը եւ գտնվելու վայրը:

3. Հայտերը կազմում են պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրի տեղեկատվական ֆոնդը եւ ենթակա են մշտական պահպանման՝ արտադրական օբյեկտների գրանցման մարմնում: Սույն Տեխնիկական կանոնակարգի 33-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 4-րդ մասերին համապատասխան փաստացի տվյալների փոփոխության դեպքում այդ փոփոխությունները ենթակա են մուտքագրման պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստր:

4. Պետական գրանցման ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրի տվյալները պետք է հրապարակված լինեն ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում, այդ թվում՝ համացանցում՝ էլեկտրոնային տեսքով:

ԳԼՈՒԽ 5. ՊԵՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ)

Հոդված 37. Սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների հաշվառումը

1. Տնտեսական գործունեության մասնակիցն իրավունք ունի սկսելու սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեություն, բացառությամբ սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված՝ սննդամթերքի

արտադրության (պատրաստման) գործընթացների, այդպիսի սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեությունն սկսելու մասին հայտը հսկողության (վերահսկողության) պետական մարմին՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ուղարկելուց հետո:

2. Մաքսային միության անդամ պետությունները վարում են այն արտադրական օբյեկտների հաշվառումը, որոնցում իրականացվում է սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեություն՝ բացառությամբ սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված սննդամթերքի արտադրության գործընթացների:

3. Այն արտադրական օբյեկտների մասին տեղեկությունները, որոնցում իրականացվում է սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործունեություն՝ բացառությամբ սույն Տեխնիկական կանոնակարգի 32-րդ հոդվածում նշված սննդամթերքի արտադրության (պատրաստման) գործընթացների, մուտքագրվում են պետական գրանցման ոչ ենթակա՝ սննդամթերքի արտադրության (պատրաստման) արտադրական օբյեկտների ռեեստր, որը վարում է Մաքսային միության անդամ պետության կողմից լիազորված մարմինը:

Պետական գրանցման ոչ ենթակա՝ սննդամթերքի արտադրության արտադրական օբյեկտների ռեեստրը վարվում է վնասվելուց եւ չթույլատրված մուտքից պաշտպանված՝ տվյալների էլեկտրոնային բազայի ձեւով:

Այդպիսի ռեեստրի տեղեկությունները հանրամատչելի են եւ տեղադրվում են օրական կտրվածքով նորացվող՝ հատուկ որոնողական սերվերի վրա՝ համացանցում:

Հոդված 38. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողությունը)

Սննդամթերքի եւ դրան ներկայացվող պահանջներին առնչվող՝ արտադրության (պատրաստման), պահպանման, փոխադրման (տրանսպորտային փոխադրման), իրացման եւ ուտիլիզացման գործընթացների առումով սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

ԳԼՈՒԽ 6. ՄՆԵԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ

Հոդված 39. Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջները

Սննդամթերքի մակնշումը պետք է համապատասխանի սննդամթերքին՝ դրա մակնշման մասով ներկայացվող պահանջները սահմանող՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին եւ (կամ) Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերի համապատասխան պահանջներին:

Համապատասխանության գնահատման (հավաստման) ընթացակարգերն անցած սննդամթերքը պետք է մակնշվի Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով, բացառությամբ ոչ արդյունաբերական պատրաստման սննդամթերքի, որն արտադրվում է քաղաքացիների կողմից տնային պայմաններում, անձնական օժանդակ տնտեսություններում կամ այգեգործությամբ, բանջարաբուծությամբ,

անասնաբուծությամբ զբաղվող քաղաքացիների կողմից եւ նախատեսված է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու համար, եւ սննդի (հանրային սննդի) ձեռնարկություններում իրացվող սննդամթերքի:

Չփաթեթավորված սննդամթերքի՝ Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը կատարվում է ապրանքաուղեկից փաստաթղթերի վրա, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության՝ սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգերով:

ԳԼՈՒԽ 7. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

Հոդված 40. Երաշխիքային վերապահումը

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ Մաքսային միության մաքսային տարածքում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող սննդամթերքը շրջանառության մեջ դնելը թույլ չտալու, ինչպես նաեւ այդ սննդամթերքը շրջանառությունից հանելու ուղղությամբ:

2. Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմինը պարտավոր է տեղեկացնել Մաքսային միության մյուս անդամ պետությունների լիազոր մարմիններին ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ ներկայացնելով տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը պարզաբանող ապացույցներ:

3. Սույն հոդվածը կիրառելու համար հիմք կարող են լինել հետեւյալ դեպքերը.

սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները չկատարելը.

սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված ստանդարտները սխալ կիրառելը, եթե կիրառվել են տվյալ ստանդարտները:

Հավելված 1
 «Սննդամթերքի անվտանգության մասին»
 Մաքսային միության
 տեխնիկական կանոնակարգի
 (ՄՄ ՏԿ 021/2011)

Անվտանգության մանրէաբանական նորմատիվներնրը (ախտածին)

Ցուցանիշը	Մթերքների խումբը	Մթերքի զանգվածը (գ), որում չի թույլատրվում
Ախտածին միկրոօրգանիզմներ՝ ներառյալ սալմոնելաները	Միս եւ մսամթերք. ենթամթերք. խոզի ճարպ եւ դրանից ստացվող մթերքներ	25
	Թռչնի ձու եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ	25 125գ՝ հում ձու (5 նմուշ՝ յուրաքանչյուրը 25 գրամում), հետազոտությունն անցկացվում է դեղնուցի հետ
	Կաթ եւ կաթնամթերք (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ եղանակով չափաճորարված մթերքներից), սնուցիչ միջավայրեր մերանների համար, կաթը մակարդող պատրաստուկներ, խառնուրդներ՝ չոր, պաղպաղակի համար	25 (50՝ լակտուլոզի, կաթնային սպիտակուցի, կազեինի խտանյութի համար)

Մերաններ	100 (հեղուկ), 10 (չոր)
Ձուկ, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքներ (բացառությամբ ձկան յուղի)	25
Ալրադացածավարային արտադրատեսակներ (ծավարեղեն՝ առանց եփելու անհրաժեշտության, ձվային մակարոնեղեն միջուկով, թեփ եւ սննդային մանրաթելեր), հացաբուլկեղեն միջուկով	25
Շաքարային հրուշակեղեն, մաստակ, կակաո-մթերքներ, շոկոլադ եւ շոկոլադային արտադրատեսակներ, ալրային հրուշակեղեն	25
Բանջարեղեն եւ կարտոֆիլ թարմ. Բանջարեղեն, կարտոֆիլ, սունկ, մրգեր՝ թերխաշ, խաշած, արագ սառեցված, չոր, թթու դրած, աղ դրված, թրջած, դրանց վերամշակումից ստացվող մթերքներ եւ դրանցից ստացված արտադրատեսակներ՝ չմանրեազերծված, Հյութամթերք՝ մրգերից, պաստերիզացված, հյութեր թարմ քամած, խտացրած հյութեր, խտացրած մորսեր եւ խտացրած մրգային եւ (կամ) բանջարեղենային խյուս, այդ թվում՝ արագ սառեցված	25
Համեմանքներ, համեմունքներ, ընկույզներ, սերմեր՝ յուղատու, սննդի մեջ օգտագործելու համար	25
Հատուկ նշանակության ճարպեր, այդ թվում՝ խոհարարական, հրուշակեղենային, հացաթխման. Մայոնեզներ, սոուսներ մայոնեզային, սոուսներ բուսական յուղերի հիմքով. Մարգարիներ, կաթնային ճարպի փոխարինիչներ, կակաոյի յուղի համարժեքներ, կակաոյի յուղի բարելավիչներ «SOS» տիպի, կակաոյի յուղի փոխարինիչներ «POP» տիպի, կակաոյի յուղի փոխարինիչներ՝ չտեմպերացվող (ջերմամշակման չենթարկվող), ոչ լաուրինային տիպի, կակաոյի յուղի	25

<p>փոխարինիչներ՝ չտեմպերացվող, լաուրինային տիպի, խառնուրդներ հալեցված, սփրեդներ, կրեմներ՝ բուսական յուղերի հիմքով</p>	
<p>Ըմպելիքներ ոչ ալկոհոլային, խտանյութեր եւ ըմպելիքների համար խառնուրդներ, օշարակներ, խմորման միջոցով ստացված ըմպելիքներ, գարեջուր եւ գարեջրի հիմքով խմիչքներ</p>	<p>25 (100՝ մինչեւ 30 օր պիտանիության ժամկետ ունեցող ոչ ալկոհոլային ըմպելիքների համար)</p>
<p>Սպիտակուցների իզոլյատներ եւ խտանյութեր ու դրանց վերամշակումից ստացվող մթերքներ, Պեկտին, ագար-ագար, դոնդողանյութ, բուսախեժեր, օսլա եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ, խմորիչներ, մեկնարկային կուլտուրաներ, խտանյութեր սննդային. Պատրաստի խոհարարական արտադրատեսակներ, հանրային սննդի ուտեստներ</p>	<p>25 (10՝ մեկնարկային կուլտուրաների համար. (50՝ հանրային սննդի ըմպելիքների համար)</p>
<p>Կենսաբանական ակտիվ սննդային հավելումներ</p>	<p>10 (25՝ սննդային մանրաթելերի հիմքով ԿԱՀ-ի համար, ԿԱՀ՝ թեյեր՝ մանկական, չոր. 50՝ պրոբիոտիկ միկրոօրգանիզմների մաքուր կուլտուրաների հիմքով հեղուկ ԿԱՀ-ի համար)</p>
<p>Հղիների եւ կերակրող մայրերի սննդի համար նախատեսված մթերքներ կաթնային հիմքով*</p>	<p>50</p>

<p>Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք վաղ տարիքի երեխաների համար՝ ադապտացված, ելակետային եւ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ՝ ակնթարթային պատրաստման, կաթ՝ չոր, ակնթարթային պատրաստման (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ չափածրարմամբ մթերքներից)*. Խառնուրդներ՝ կաթնային, ադապտացված, մանրէազերծված, կաթ եւ սերուցք՝ մանրէազերծված, ոչ ասեպտիկ լցման, պատրաստված կաթնային խոհանոցներում. Դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերք (բացի մսային եւ կաթնային հիմքով սուբլիմացված մթերքներից, սպիտակուցի ցածր պարունակությամբ մթերքներից)</p>	<p>100</p>
<p>Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք վաղ տարիքի երեխաների համար՝ հավելյալ սննդի համար նախատեսված սննդամթերք հացահատիկային հիմքով՝ եփելու անհրաժեշտությամբ ալյուր եւ ձավար. Մանկական ըմպելիքներ խոտաբույսերից (խոտաբույսերից թեյ). Կաթ չոր</p>	<p>25</p>
<p>Վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի, այդ թվում՝ երեխաների դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված այլ սննդամթերք՝ մսային եւ կաթնային հիմքով սուբլիմացված մթերքներ, սպիտակուցի ցածր պարունակությամբ մթերքներ. Հետագա օգտագործման եւ մասամբ ադապտացված կաթնային խառնուրդներ՝ ջերմամշակում պահանջող, ադապտացված հեղուկ թթվակաթնային խառնուրդներ՝ ասեպտիկ լցման, ադապտացված եւ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ՝ ջերմամշակում պահանջող (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված, ասեպտիկ չափածրարմամբ մթերքներից, պահածոյացված արտադրանքից)*. Չոր շիլաների համար՝ (չոր մթերքի մեջ)</p>	<p>50</p>
<p>Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար (բացի ուլտրապաստերիզացված</p>	<p>25 (100՝ կաթ՝</p>

	կաթից՝ ոչ ասեպտիկ լցման սպառողական տարայում. ուլտրապաստերիզացված սերուցքից՝ ոչ ասեպտիկ լցման սպառողական տարայում, պահածոյացված արտադրանքից)	ուլտրապաստերիզացված, ոչ ասեպտիկ լցման սպառողական տարայում. սերուցք՝ ուլտրապաստերիզացված, ոչ ասեպտիկ լցման սպառողական տարայում)
Listeria monocytogenes	Միս եւ մսամթերք. ենթամթերք, ենթամթերք, խոզի ճարպ եւ դրանից ստացվող մթերքներ (բացի սննդային արյունից)	25
	Կաթ եւ կաթնամթերք, այդ թվում՝ խառնուրդներ՝ չոր, նախատեսված փափուկ պաղպաղակի համար (բացի հում կաթից, հում յուղագերծված կաթից եւ հում սերուցքից՝ մանրէագերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ չափածրարմամբ, թթվակաթնային, չոր, խտացրած մթերքներից, պանիրներից եւ հալած պանրամթերքից, հալած կարագից, կաթնային ճարպից, սերուցքաբուսական հալած խառնուրդից)	25 125 գ (փափուկ եւ աղաջուր դրած պանիրների համար — 5 նմուշներում՝ յուրաքանչյուրը 25 գ զանգվածով)
	Ձուկ, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքներ (բացի չորացված, օդում չորացված, թորշոմած ձկներից, պաստերիզացված ձկնկիթից)	25
	Բանջարեղեն եւ կարտոֆիլ՝ թերխաշ, արագ սառեցված եւ դրանցից ստացված արտադրատեսակներ, աղցաններ՝ հում բանջարեղենից եւ մրգերից, Հյութեր՝ թարմ քամած	25
	Սփրեղներ բուսասերուցքային	25
	Հղիների եւ կերակրող մայրերի համար նախատեսված մթերքներ՝ կաթնային եւ սոյայի հիմքով*	50 25՝ կաթնային եւ

	հացահատիկային հիմքով չոր մթերքների համար (չոր մթերքի մեջ)
Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք վաղ տարիքի երեխաների համար՝ ադապտացված, ելակետային եւ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ՝ ակնթարթային պատրաստման, կաթ՝ չոր, ակնթարթային պատրաստման. Դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերք՝ վաղաժին եւ թերքաշ երեխաների համար մթերքներ, չոր կաթնային՝ սպիտակուցի բարձր պարունակությամբ, լակտոզայի ցածր պարունակությամբ եւ առանց լակտոզայի պարունակության մթերքներ (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ չափածրարմամբ մթերքներից)*. Խառնուրդներ՝ կաթնային, ադապտացված, մանրէազերծված, կաթ եւ սերուցք՝ մանրէազերծված, ոչ ասեպտիկ լցման, պատրաստված կաթնային խոհանոցներում	100
Վաղ տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված այլ սննդամթերք կաթնային հիմքով (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ չափածրարմամբ մթերքներից)*. չոր շիլաների համար՝ չոր մթերքի մեջ	50
Կաթ՝ չոր, նախատեսված վաղ տարիքի երեխաների սննդի համար	25
Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք՝ մսային կիսապատրաստվածքներ եւ ձկնից ու արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից կիսապատրաստվածքներ, պաշտետներ եւ մսային խոհարարական արտադրատեսակներ, երշիկեղեն (նրբերշիկներ եւ սարդեկաներ), կաթ եւ կաթնամթերք (բացի մանրէազերծված, ուլտրապաստերիզացված ասեպտիկ չափածրարմամբ մթերքներից)	25

Enterobactersakaz akii	Վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված սննդամթերք՝ ադապտացված կաթնային խառնուրդներ, շիլաներ՝ չոր, կաթնային, ակնթարթային պատրաստման, նախատեսված մինչև 6 ամսական երեխաների համար. Դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերք՝ նախատեսված մինչև 6 ամսական երեխաների համար, վաղածին եւ (կամ) թերքաշ երեխաների սննդի համար, չոր (չոր մթերքի մեջ). կաթնային խառնուրդներ՝ վերականգնված, պաստերիզացված, արտադրված մանկական կաթնային խոհանոցներում, նախատեսված երեխաների համար ծննդյան առաջին օրվանից	300 նորմավորվող զանգվածում E. Coli-ի եւ սալմոնելաների շարքին չդասվող Enterobacteriaceae մանրէներ հայտնաբերելու դեպքում
Yersinia տեսակի մանրէներ	Չոր բանջարեղեն եւ կարտոֆիլ ու դրանց վերամշակումից ստացվող մթերքներ. արտադրատեսակներ հում, բանջարեղեն եւ մրգեր՝ կտրատված, թերխաշ, այդ թվում՝ սառեցված	25 (արտադրության տարածաշրջանում համաճարակային իրավիճակի առկայության դեպքում)
Ստաֆիլոկոկի էնտերոտոքսիններ	Պանիրներ եւ պանրամթերք, պանրի մածուկներ, այդ թվում՝ մանկական սննդի համար նախատեսված. Մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք՝ չոր, կաթնային հիմքով (բացի չոր շիլաներից), այդ թվում՝ դիետիկ բուժիչ սննդի համար նախատեսված հատուկ նշանակության սննդամթերք	125 (5 նմուշներում՝ յուրաքանչյուրը 25 գ զանգվածով), (նորմավորվող զանգվածում S.aureus ստաֆիլոկոկեր հայտնաբերելու դեպքում)

* (օգտագործման համար պատրաստի մթերքի մեջ)

Հավելված 2

«Սննդամթերքի անվտանգության մասին»

Մաքսային միության

տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 021/2011)

Անվտանգության մանրէաբանական նորմատիվները

Աղյուսակ 1

1.1. Միս եւ մսամթերք. թռչուն, ձու եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքներ

Ցուցանիշները	Թույլատրելի մակարդակները	Ծանոթագրություններ
Մեզոֆիլային աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ (սմ ³), ոչ ավելի	10	Թարմ միս (բոլոր տեսակների սպանդային կենդանիների)
	100	Հավկիթ, լորի ձու դիետիկ
	1x10 ³	Քիչ սառեցված, պաղեցված միս (բոլոր տեսակների սպանդային կենդանիների). Երշիկեղեն՝ եփած, այդ թվում՝ թռչնի մսից, այդ թվում՝ կտրատված. Մթերքներ՝ մսից, եփած, եփած եւ խորոված, ապխտած-եփած, ապխտած-խորոված, խորոված, այդ թվում՝ կտրատված եւ վակուումային փաթեթավորմամբ՝ փոփոխված մթնոլորտի պայմաններում. Պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թաղանթով.

	Թռչնի մսեղիք եւ մսեղիքի մասեր ու դրանցից ստացված արտադրատեսակներ՝ խորոված, եփած-ապխտած, ապխտած, հում ապխտած, հում թորշումած, այդ թվում՝ մանր կտրատված,
2×10^3	Երշիկներ՝ արյունային, լիվերային, զեյցներ, սալտիսոններ. Դոնդողացված մթերքներ՝ մսից եւ թռչնից. Պաշտետներ թռչնի մսից.
$2,5 \times 10^3$	Երշիկեղեն՝ եփած, երկրորդ, երրորդ սորտի հումքից վերամշակված, այդ թվում՝ կտրատված
5×10^3	Պաշտետներ թռչնի լյարդից. Լիվերային երշիկներ՝ թռչնի մսից եւ ենթամթերքից. Խճողակ՝ հավի, ջերմային չորացմամբ. Հավկիթ ուտելի եւ այլ թռչնատեսակների ձու
1×10^4	Սառեցված միս. Միս՝ պաղեցված, հատվածամասերով, վակուումային փաթեթավորմամբ կամ փոփոխված գազային մթնոլորտի պայմաններում փաթեթավորված. Մսային ուտեստներ՝ պատրաստի, արագ սառեցված՝ բոլոր տեսակի մթերատու կենդանիների մսի չափաբաժանված կտորներից (առանց սոուսի), տապակած, խաշած. Թռչնի մսեղիք եւ միս պաղեցված. Չորացված մթերքներ թռչնի մսից, այդ թվում՝ խճողակ՝ ճտի, սուբլիմացիոն չորացմամբ. Ձվի սպիտակուց սուբլիմացիոն չորացմամբ
2×10^4	Մսային ուտեստներ՝ պատրաստի, արագ սառեցված, մանր կտրատված մսից, սոուսով. Նրբաբլիթներ՝ մսից կամ ենթամթերքից միջուկով
$2,5 \times 10^4$	Ալբումին սննդային. Խտանյութեր՝ սննդային, ենթամթերքի մսից, չոր
5×10^4	Արյան պլազմայի (շիճուկի) չոր խտանյութ. Ձվի փոշի, մելանժ՝ էնտերալ սնուցման մթերքների համար. Ձվի դեղնուց՝ սուբլիմացիոն չորացմամբ
1×10^5	Թռչնի մսեղիք եւ միս սառեցված. Ձվամթերք հեղուկ, Ֆիլտրացված, պաստերիզացված. Կիսապատրաստվածքներ՝ թռչնի մսից, բնական՝ մսաոսկրային, անոսկր, առանց թաթախման

	5x10 ⁵	<p>Բլոկներ՝ ոսկրով, անոսկր, ջլային մսից, սառեցված.</p> <p>Կիսապատրաստվածքներ՝ մսային, անոսկր (պաղեցված, քիչ սառեցված, սառեցված), այդ թվում՝ մարինացված՝ խոշոր կտորներով. արյուն սննդային.</p> <p>Թռչնի մսեղիք եւ միս՝ պաղեցված, քիչ սառեցված, սառեցված.</p> <p>Ձվամթերք՝ հեղուկ, սառեցված</p>
	1x10 ⁶	<p>Կիսապատրաստվածքներ՝ մսային, անոսկր (պաղեցված, քիչ սառեցված, սառեցված), այդ թվում՝ մարինացված, փոքր կտորներով: Կիսապատրաստվածքներ՝ թռչնի մսից, բնական՝ մսաոսկրային, անոսկր, թաթախված, համեմանքներով, սոուսով, մարինացված. միս՝ կտորներով, անոսկր, բլոկներով. Կիսապատրաստվածքներ՝ թռչնի մսից, մանր կտրատված (պաղեցված, քիչ սառեցված, սառեցված). Թռչնի միս՝ մեխանիկական եղանակով ոսկրահանված, ոսկրային մնացորդը պաղեցված, սառեցված, բլոկներով, կիսապատրաստվածք ոսկրային. Թռչնի կաշի. Թռչնի ենթամթերք եւ դրանից ստացված կիսապատրաստվածքներ</p>
	2x10 ⁶	<p>Կիսապատրաստվածքներ՝ մսային, մանր կտրատված (պաղեցված, սառեցված), խմորապատ, լցոնած (տոլմա, դոմիկներ), կիսապատրաստվածքներ՝ միս պարունակող, մանր կտրատված</p>
	5x10 ⁶	<p>Միս՝ սառեցված, սպանդային կենդանիների, մեխանիկական եղանակով ոսկրահանված.</p> <p>Կիսապատրաստվածքներ՝ մսային, մանր կտրատված (պաղեցված, սառեցված)՝ կաղապարված, այդ թվում՝ թաթախված. Խճողակ՝ տավարի մսից, խոզի մսից, սպանդային այլ կենդանիների մսից. Կիսապատրաստվածքներ մսաոսկրային (խոշոր կտորներով, չափաբաժիններով, փոքր կտորներով)</p>
Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ (կոլիծեեր),	1.0	<p>Թարմ միս (կենդանիների բոլոր տեսակների). Երշիկեղեն, այդ թվում՝ թռչնի մսից, կիսաապխտած, եփած-ապխտած, եփած, այդ թվում՝ կտրատված. Մթերքներ՝ մսից,</p>

<p>չեն թույլատրվում մթերքի զանգվածում (գ/սմ³)</p>		<p>եփած, եփած եւ խորոված, ապխտած-եփած, ապխտած-խորոված, խորոված, այդ թվում՝ կտրատված եւ վակուումային փաթեթավորմամբ՝ փոփոխված մթնոլորտի պայմաններում. Երշիկներ արյունային, լիվերային, զեյցներ, սալտիսոններ. Պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թաղանթով. Խտանյութեր՝ սննդային, մսից եւ ենթամթերքից, չոր. Թռչնի մսեղիք եւ մսեղիքի մասեր ու արտադրատեսակներ՝ խորոված, եփած-ապխտած, ապխտած, հում ապխտած, հում թորշոմած. Խոհարարական արտադրատեսակներ՝ մանր կտրատված մսից</p>
	<p>0.1</p>	<p>Քիչ սառեցված, պաղեցված միս (կենդանիների բոլոր տեսակների). Արյուն սննդային եւ դրա վերամշակումից ստացվող մթերքներ չոր՝ ալբումին, պլազմայի խտանյութ. Երշիկներ եւ մթերքներ՝ մսից ու թռչնից, հում ապխտած եւ հում թորշոմած. Դոնդողացված մթերքներ՝ մսից եւ թռչնից. Պատրաստի, արագ սառեցված ուտեստներ թռչնի մսից. Պաշտետներ եւ լիվերային երշիկներ՝ թռչնի մսից եւ ենթամթերքից. Մթերքներ՝ չորացված, թռչնի մսից.</p> <p>Հավկիթ, լորի ձու դիետիկ. Ձվամթերք՝ հեղուկ, պաստերիզացված, սառեցված, չոր, ձվածեղի համար խառնուրդներ</p>
	<p>0.01</p>	<p>Միս սառեցված. միս (կենդանիների բոլոր տեսակների)՝ պաղեցված, հատվածամասերով, վակուումային փաթեթավորմամբ կամ փոփոխված գազային մթնոլորտի պայմաններում փաթեթավորված. Միս՝ սառեցված, սպանդային կենդանիների, մսեղիք, կիսամսեղիք, քառորդամասեր, հատվածամասեր. Մսային ուտեստներ՝ պատրաստի, արագ սառեցված. Խճողակ՝ ճտի, սուբլիմացիոն չորացմամբ. Ձու ուտելի. Ձվամթերք սուբլիմացիոն չորացմամբ</p>
	<p>0.001</p>	<p>Միս՝ սառեցված, ոսկրային, անոսկր, բլրկային, դոնդողացված. Կիսապատրաստվածքներ՝ մսային, անոսկր (պաղեցված, քիչ սառեցված, սառեցված), այդ թվում՝ մարինացված.</p>

	0.0001	<p>Միս՝ սառեցված, մեխանիկական եղանակով ոսկրահանված.</p> <p>Կիսապատրաստվածքներ՝ մսային, միս պարունակող եւ թռչնի մսից, մսատկրային, մանր կտրատված, կաղապարով, այդ թվում՝ թաթախված, խմորապատ, լցոնած.</p> <p>Խճողակներ</p>
E.coli, չի թույլատրվում մթերքի զանգվածում (գ/սմ ³)	1.0	Երշիկներ եւ մթերքներ՝ մսից եւ թռչնից, հում ապխտած եւ հում թորշոմած, այդ թվում՝ կտրատված եւ վակուումային փաթեթավորմամբ
S.aureus, չի թույլատրվում մթերքի զանգվածում (գ/սմ ³)	1.0	Արյուն սննդային. Երշիկեղեն եւ մթերքներ՝ մսից եւ թռչնից, եփած, խորոված, եփած-ապխտած, ապխտած, հում ապխտած, հում թորշոմած. Երշիկներ՝ արյունային, լիվերային, թռչնի մսից եւ ենթամթերքից. Երշիկներ՝ արյունային, լիվերային, զելցներ, սալտիսոններ, պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թաղանթով, դոնդողացված մսային մթերքներ (այն մթերքների համար, որոնց պիտանիության ժամկետները չեն գերազանցում 2 օրը). Խոհարարական արտադրատեսակներ՝ թռչնի մանր կտրատված մսից. Պատրաստի, արագ սառեցված ուտեստներ՝ թռչնի մսից. տապակած, խաշած, մանր կտրատված մսից, սոուսով եւ խավարտով. Պաշտետներ թռչնի մսից, այդ թվում՝ փորոտիքի օգտագործմամբ. Դոնդողացված մթերքներ թռչնից. Ձվամթերք՝ հեղուկ, պաստերիզացված, սառեցված. Չոր խառնուրդներ ձվածեղի համար
	0.1	Մսային ուտեստներ՝ պատրաստի, արագ սառեցված, բոլոր տեսակի մթերատու կենդանիների մսի չափաբաժանված կտորներից առանց սոուսի, տապակած, խաշած, մանր կտրատված մսից սոուսով, նրբաբլիթներ՝ մսից կամ ենթամթերքից միջուկով եւ այլն. Պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թաղանթով. Դոնդողացված մսային մթերքներ. Երշիկեղեն՝ թռչնի մսից, կիսաապխտած. Պաշտետներ թռչնի լյարդից. Խճողակ՝ հավի, սուբլիմացիոն եւ ջերմային չորացմամբ
	0.01	Չորացված մթերքներ թռչնի մսից

Proteus խմբի մանրէներ, չի թույլատրվում մթերքի զանգվածում (գ)	1.0	Միս (կենդանիների բոլոր տեսակների) պաղեցված՝ մանկական, դիետիկ սննդի համար. ալբումին սննդային. Խճողակ՝ հավի, սուբլիմացիոն եւ ջերմային չորացմամբ. Չորացված մթերքներ թռչնի մսից. Ձվամթերք՝ հեղուկ, ֆիլտրված, պաստերիզացված. Ձվամթերք չոր, խառնուրդներ ձվածեղի համար
	0.1	Միս պաղեցված (կենդանիների բոլոր տեսակների), 7 օրից ավելի պիտանիության ժամկետով
Սուլֆիտ վերականգնող կլոստրիդիաներ, չի թույլատրվում մթերքի զանգվածում (գ/սմ ³)	1.0	Արյուն սննդային, ալբումին. Արյան պլազմայի չոր խտանյութ. Պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թաղանթով
	0.1	Երշիկեղեն՝ մսից եւ թռչնից, եփած-ապխտած, կիսաապխտած. Երշիկեղեն եփած, այդ թվում՝ կտրատված եւ վակուումային փաթեթավորմամբ՝ փոփոխված մթնոլորտի պայմաններում. Մթերքներ՝ մսից, եփած, ապխտած-եփած, ապխտած-խորոված, խորոված. Մթերքներ՝ մսից, եփած եւ խորոված, ապխտած-եփած, այդ թվում՝ կտրատված եւ վակուումային փաթեթավորմամբ՝ փոփոխված մթնոլորտի պայմաններում. Ջելցներ, սալտիսոններ. Երշիկներ՝ արյունային, լիվերային (այն մթերքների համար, որոնց պիտանիության ժամկետները չեն գերազանցում 2 օրը). Երշիկներ՝ արյունային, լիվերային, այդ թվում՝ թռչնի մսից եւ ենթամթերքից. Պաշտետներ՝ լյարդից եւ (կամ) մսից, այդ թվում՝ թռչնի, այդ թվում՝ թաղանթով. Դոնդողանման մթերքներ՝ մսային եւ թռչնից. Թռչնի մսեղիք եւ մսեղիքի մասեր ու արտադրատեսակներ՝ խորոված, եփած-ապխտած, ապխտած, հում ապխտած, հում թորշոմած. Խոհարարական արտադրատեսակներ թռչնի մանր կտրատված մսից
	0.01	Երշիկեղեն եւ մթերքներ՝ սպանդային կենդանիների մսից, հում ապխտած եւ հում թորշոմած, երշիկեղեն՝ կիսաապխտած եւ եփած-ապխտած, եփած. Երշիկեղեն՝ թռչնի մսից, հում թորշոմած, հում ապխտած, կիսաապխտած. Մթերքներ՝ մսից, ապխտած-եփած (այտերի միս, այտի հետնամասի միս, սրունքի միս). Երշիկներ՝ արյունային, լիվերային

Enterococcus խմբի մանրէներ, ԳԱՄ/գ (սմ ³), ոչ ավելի	1x10 ³	Մսային ուտեստներ՝ պատրաստի, արագ սառեցված, մսի չափաբաժանված կտորներից (առանց սոուսի), տապակած, խաշած. մանր կտրատված մսից սոուսով. Նրբաբլիթներ՝ մսից կամ ենթամթերքից միջուկով եւ այլն
	1x10 ⁴	Պատրաստի, արագ սառեցված ուտեստներ՝ թռչնի մսից
Բորբոսներ, ԳԱՄ/գ (սմ ³), ոչ ավելի	500	Կիսապատրաստվածքներ՝ մսային, մանր կտրատված (պաղեցված, սառեցված), կաղապարով, այդ թվում՝ թաթախված, խմորապատ, լցոնած (տոլմա, դրմիկներ), կիսապատրաստվածքներ՝ միս պարունակող, մանր կտրատված, 1 ամսից ավելի պիտանիության ժամկետով
	100	Խտանյութեր՝ սննդային, ենթամթերքի մսից, չոր

1.2. Ձուկ, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ եւ դրանց վերամշակումից ստացվող մթերքներ

Ցուցանիշները	Թույլատրելի մակարդակները	Ծանոթագրություններ
Մեզոֆիլային աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմների քանակ, ԳԱՄ/գ, ոչ ավելի	1x10 ³	Արտադրատեսակներ՝ եփած-սառեցված, կառուցվածքավորված. Ձկնկիթ՝ թառափազգի ձկների, հատիկավոր, պաստերիզացված
	5x10 ³	Ձկնկիթ՝ այլ տեսակի ձկների, պաստերիզացված. Հիդրոլիզատ արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից, երկփեղկ կակղամորթներ կենդանի. Ջեմեր ծովային կաղամբից
	1x10 ⁴	Ձկնամթերք՝ տաք եւ սառը ապխտման, չմասնատված. Խտհարարական արտադրատեսակներ՝ ջերմամշակմամբ, ձկնկիթից մթերքներ. Աղցաններ՝ բազմաբաղադրիչ, առանց համեմվածքի. Ձկնկիթ՝ թառափազգի ձկների, հատիկավոր, տուփային, մամլած, ձկնկիթի անալոգներ

2x10 ⁴	Եփած-սառեցված արտադրանք՝ արագ սառեցված, պատրաստի ուտեստներ ձկից եւ արդյունազործության ոչ ձկնային օբյեկտներից, այդ թվում՝ վակուումային փաթեթավորմամբ. Թորշոմած եւ չորացված արտադրանք ծովային անողնաշարավորներից:
3x10 ⁴	Ձկնամթերք՝ սառը ապխտման, մասնատված, այդ թվում՝ կտրատված
7,5x10 ⁴	Ձկնամթերք՝ սառը ապխտման, բալիկային արտադրատեսակներ, այդ թվում՝ կտրատված
5x10 ⁴	<p>Ձուկ-հումք եւ ձուկ կենդանի. Ձկնամթերք՝ պաղեցված եւ սառեցված. խճողակ հատուկ կոնդիցիայի.</p> <p>Պրեսերվներ՝ մասնատված եւ ջերմամշակված ձկից, երկփեղկ կակղամորթների մսից. Ձուկ՝ մասնատված, ենթաապխտած, քիչ աղ դրած, այդ թվում՝ ֆիլե, այդ թվում՝ վակուումային փաթեթավորմամբ, ձուկ՝ թորշոմած, օդում չորացված, չորացված. Խոհարարական բազմաբաղադրիչ արտադրատեսակներ՝ ջերմամշակմամբ, դոնդողացված մթերքներ. Սերմնագեղձեր եւ ձկնկիթ թաղանթով՝ պաղեցված եւ սառեցված. Ձկնկիթ թառափազգի ձկների՝ թաղանթով, աղ դրած. սաղմոնազգի ձկների՝ հատիկավոր, աղ դրած, սառեցված ձկնաթաղանթից. Խեցգետնանմաններ եւ այլ անողնաշարավորներ կենդանի. երկփեղկ կակղամորթներ՝ պաղեցված, սառեցված. Չորացված եւ սպիտակուցային՝ ծովային արդյունազործության ոչ ձկնային օբյեկտներ. չոր միդիային արգանակ, արգանակային խորանարդիկներ եւ մածուկներ, սպիտակուց մեկուսացված. Ջրիմուռներ, ծովային խոտեր-հումք, այդ թվում՝ սառեցված եւ չորացված</p>
1x10 ⁵	Ձկնամթերք՝ պաղեցված եւ սառեցված՝ բացի հատուկ կոնդիցիայի խճողակից, արդյունազործության ոչ ձկնային օբյեկտներ. Լյարդ, ձկան գլուխ սառեցված. Պրեսերվներ՝ բարկահամ եւ հատուկ աղաբոնվածքով, ձկից, այդ թվում՝ չմասնատված. պրեսերվներ «Մածուկ»՝ մածուկներ սպիտակուցային. Ձկնամթերք՝ սառը ապխտման, աղ դրած, համեմված, մարինացված, այդ թվում՝ ֆիլե,

		կտրատված, լցվածքով, համեմանքներով, խավարտով, բուսական յուղով. Ձկնկիթ՝ սաղմոնազգի ձկների, հատիկավոր, աղ դրած. Ձկնկիթ՝ այլ տեսակի ձկների, ծակծկված, թաղանթով, աղ դրած, ապխտած, թորշոմած
	2x10 ⁵	Պրեսերվներ՝ մասնատված ձկից եւ արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից, բուսական յուղերի, լցվածքների, սոուսների ավելացմամբ, խավարտով եւ առանց խավարտի (այդ թվում՝ սաղմոնազգի ձկներից). Խոհարարական արտադրատեսակներ առանց ջերմամշակման. ճուկ՝ աղ դրած, մանր կտրատված, պաշտետներ, մածուկներ. կարագ՝ ծովատառեխի, ձկնկիթի, կրիլների եւ այլն. Խոհարարական ձկնկիթային մթերքներ՝ բազմաբաղադրիչ ուտեստներ
	5x10 ⁵	Պրեսերվներ «Մածուկ»՝ ձկնային մածուկներ. Ապուրներ՝ չոր, ձկան, եփելու անհրաժեշտությամբ
Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ (կոլիձեւեր), չեն թույլատրվում մթերքի զանգվածում (գ)	1.0	Պրեսերվներ ջերմամշակված ձկից. Ձկնամթերք տաք ապխտման. Խոհարարական արտադրատեսակներ՝ ջերմամշակմամբ, խճողակային արտադրատեսակներ, մածուկներ, պաշտետներ՝ խորոված, տապակած, խաշած, լցվածքով եւ այլն. Աղցաններ՝ ձկից եւ ծովամթերքից, առանց համեմվածքի. Խոհարարական ձկնկիթային մթերքներ ջերմամշակմամբ. Եփած-սառեցված արտադրանք՝ կառուցվածքավորված արտադրատեսակներ. Ձկնկիթ՝ թառափազգի ձկների, սաղմոնազգի ձկների՝ հատիկավոր, աղ դրած, այլ տեսակի ձկների՝ պաստերիզացված. Արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ երկփեղկ կակղամորթներ կենդանի, թորշոմած եւ չորացված. Չորացված եւ սպիտակուցային՝ ծովային արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ հիդրոլիզատ եւ սպիտակուցաածխաջրային խտանյութ միդիայից. Ջրիմուռներ եւ ծովային խոտեր չորացված, ջեմեր ծովային կաղամբից
	0.1	Ձկնամթերք՝ սառը ապխտման, այդ թվում՝ կտրատված, բալիկային արտադրատեսակներ, այդ թվում՝ կտրատված. Ձուկ՝ մասնատված, ենթաապխտած, քիչ աղ դրած, այդ թվում՝ ֆիլե, այդ թվում՝

	<p>վակուումային փաթեթավորմամբ. Ձուկ՝ աղ դրած, համեմված, մարինացված. Ձուկ՝ թորշոմած, օդում չորացված, չորացված. Պրեսերվներ «Մածուկ»՝ սպիտակուցային մածուկից, երկփեղկ կակղամորթների մսից. Խոհարարական արտադրատեսակներ դոնդողացված, ձկնկիթային բազմաբաղադրիչ մթերքներ առանց ջերմամշակման. Եփած-սառեցված արտադրանք՝ արագ սառեցված, պատրաստի ձկնային ճաշատեսակներ եւ նախուտեստներ, նրբաբլիթներ ձկով, միջուկ ձկնային, այդ թվում՝ վակուումային փաթեթավորմամբ, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից. Սերմնագեղձեր աղ դրած. Ձկնկիթ այլ տեսակի ձկների, բացի թառափազգիներից եւ սաղմոնազգիներից՝ ծակծկված աղ դրած, թաղանթով քիչ աղ դրած, ապխտած, թորշոմած. Ձկնկիթի անալոգներ, այդ թվում՝ սպիտակուցային. Երկփեղկ կակղամորթներ՝ պաղեցված, սառեցված. Չորացված եւ սպիտակուցային՝ ծովային արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ. չոր միդիային արգանակ, արգանակային խորանարդիկներ եւ մածուկներ, սպիտակուց մեկուսացված. Ջրիմուռներ եւ ծովային խոտեր-հումք</p>
0.01	<p>Ձուկ-հումք եւ ձուկ կենդանի, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ խեցգետնանմաններ եւ այլ անողնաշարավորներ կենդանի. Պաղեցված եւ սառեցված ձկնամթերք՝ խճողակ հատուկ կոնդիցիայի. Պրեսերվներ՝ բարկահամ եւ հատուկ աղաբռնվածքով, մասնատված ձկից եւ արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից, բուսական յուղերի, լցվածքների, սոուսների ավելացմամբ, խավարտով եւ առանց խավարտի, ձկան մածուկից. Ձկնամթերք սառը ապխտման, երշիկեղեն եւ խճողակային արտադրատեսակներ. Ձուկ՝ աղ դրած, համեմված, մարինացված, այդ թվում՝ մասնատված, այդ թվում՝ առանց կոնսերվանտների, կտրատված, լցվածքով, համեմանքներով, խավարտով, բուսական յուղով. Խոհարարական արտադրատեսակներ՝ ջերմամշակմամբ. բազմաբաղադրիչ արտադրատեսակներ, այդ թվում՝ սառեցված, առանց ջերմամշակման. ձուկ՝ աղ դրած, մանր կտրատված, պաշտետներ, մածուկներ</p>

	0.001	Պաղեցված, սառեցված ձուկ, ձկնամթերք՝ ֆիլե ձկան, ձուկ հատուկ մշակման, խճողակ՝ ձկան, սննդային, կաղապարված խճողակային արտադրատեսակներ, այդ թվում՝ ալրային բաղադրիչով. Արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ խեցգետնանմաններ եւ այլ անողնաշարավորներ. Ապուրներ՝ չոր, ձկան, եփելու անհրաժեշտությամբ. Խոհարարական արտադրատեսակներ առանց ջերմամշակման. կարագ՝ ծովատառեխի, ձկնկիթի, կրիլների եւ այլն. Սերմնագեղձեր եւ ձկնկիթ թաղանթով՝ պաղեցված եւ սառեցված. Լյարդ, ձկան գլուխ սառեցված
S. aureus, չեն թույլատրվում մթերքի զանգվածում (գ)	1.0	Պրեսերվներ՝ քիչ աղ դրած, բարկահամ եւ հատուկ աղաբռնվածքով, ձկից, այդ թվում՝ բուսական յուղերի, լցվածքների, սոուսների ավելացմամբ, խավարտով եւ առանց խավարտի. ջերմամշակված ձկից, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ բուսական յուղերի, լցվածքների ավելացմամբ, խավարտով եւ առանց խավարտի. Ձկնամթերք տաք եւ սառը ապխտման, բալիկային արտադրատեսակներ, այդ թվում՝ կտրատված. Խոհարարական արտադրատեսակներ՝ ջերմամշակմամբ. ձուկ եւ խճողակային արտադրատեսակներ, մածուկներ, պաշտետներ՝ խորոված, տապակած, խաշած, լցվածքով եւ այլն, ալրային բաղադրիչով, բազմաբաղադրիչ արտադրատեսակներ, դոնդողացված մթերքներ. Խոհարարական ձկնկիթային մթերքներ. Խոհարարական արտադրատեսակներ առանց ջերմամշակման խառնելուց հետո. աղցաններ՝ ձկից եւ ծովամթերքից, առանց համեմվածքի. Եփած-սառեցված արտադրանք՝ արտադրատեսակներ կառուցվածքավորված, արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներից՝ կակղամորթների միս, ուտեստներ երկփեղկ կակղամորթների մսից, մանր ծովախեցգետինների, ծովախեցգետինների, կրիլների մսից. Ձկնկիթ թառափազգի ձկների. սաղմոնազգի ձկների՝ հատիկավոր, աղ դրած. այլ տեսակի ձկների, ձկնկիթի անալոգներ. Չորացված եւ սպիտակուցային՝ ծովային արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ. հիդրոլիզատ միդիայից, սպիտակուցաածխաջրային խտանյութ միդիայից
	0.1	Պաղեցված եւ սառեցված ձկնամթերք՝ խճողակ հատուկ կոնդիցիայի. Պրեսերվներ «Մածուկ» երկփեղկ կակղամորթների մսից. Ձկնամթերք սառը ապխտման, այդ

		<p>թվում՝ խճողակ եւ երշիկեղեն, ձուկ՝ մասնատված, ենթաապխտած, քիչ աղ դրած, այդ թվում՝ ֆիլե վակուումային փաթեթավորմամբ. Ձուկ՝ աղ դրած, համեմված, մարինացված, մասնատված, այդ թվում՝ լցվածքով, համեմանքներով, խավարտով, բուսական յուղով. Խոհարարական արտադրատեսակներ առանց ջերմամշակման. Ձուկ՝ աղ դրած, մանր կտրատված, պաշտետներ, մածուկներ, կարագ՝ ծովատառեխի, ձկնկիթի, կրիլների եւ այլն, խոհարարական ձկնկիթային բազմաբաղադրիչ ուտեստներ առանց ջերմամշակման խառնելուց հետո. Եփած-սառեցված արտադրանք՝ արագ սառեցված, պատրաստի ձկնային ճաշատեսակներ, այդ թվում՝ վակուումային փաթեթավորմամբ. Արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ խեցգետնանմաններ. Սերմնագեղձեր աղ դրած. Երկփեղկ կակղամորթներ</p>
	0.01	<p>Ձուկ-հումք եւ ձուկ կենդանի. Ձուկ պաղեցված, սառեցված. Արդյունագործության ոչ ձկնային օբյեկտներ՝ խեցգետնանմաններ եւ այլ անողնաշարավորներ (գլխտանի եւ փորոտանի կակղամորթներ, փշամորթներ եւ այլն)՝ կենդանի, պաղեցված, սառեցված. Պաղեցված եւ սառեցված ձկնամթերք՝ ֆիլե ձկան, ձուկ հատուկ մշակման, խճողակ՝ ձկան, սննդային, կաղապարված խճողակային արտադրատեսակներ, այդ թվում՝ ալրային բաղադրիչով. Սերմնագեղձեր եւ ձկնկիթ թաղանթով՝ պաղեցված եւ սառեցված. Լյարդ, ձկան գլուխ սառեցված</p>
V.parahaemolyticus, ԳԱՄ/գ, ոչ ավելի	10	<p>Ձկնամթերք՝ ծովային ձկից, սառը ապխտման, այդ թվում՝ կտրատված. Ձուկ՝ ծովային, մասնատված, ենթաապխտած, քիչ աղ դրած, այդ թվում՝ ֆիլե</p>
